



ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱ-ՔՂԵՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՊՆՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ



ԳՈՒՄԱՐՈՒԱԾ՝

1334 ՅՈՒՆԻՍ 30 ԵՒ ՅՈՒԼԻՍ 1-2-ԻՆ

ՏԻԹՐԱՅԻԹ, ՄԻՇ.



և

ՆՈՐ ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

(39-րդ էջէն սկսած)

\*\*\*\*\*

# ԿՈՉ ԲՈՂՈՐ ՔՂԵՑԻՆԵՐՈՒՆ

(\$10.000 ՏՕԼԱՐԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ)

Հայրենակիցներ :-

Մեր Անդրանիկ Համագումարը առաջադրեց \$10.000 տօլարի քէմփէյն մը Խ. Հայաստանի մէջ Նոր Քղի աւանի կառուցման գործին լաւագոյն կերպով սկսելու համար :

Այս \$10.000 տօլարի գոյացումը առաւելապէս կը նշանակէ ուժ տալ աւանի բնակարանային շինութեան, որ իր կարգին հնարաւորութիւն պիտի տայ մեզ, արտասահմանի մեր Քղեցի տարագիր Հայրենակիցները փոխադրելու Խ. Հայաստան ինքնաբաւ դարձնելով զանոնք աղատելու իրենց ներկայ անբաղձալի դրութենէն :

Այս գերազանց Հատկաւորական պարտականութեան

մենք վստահ ենք որ մեր ատմականակցութիւնը պիտի :

պայմաններն են՝

կցողները պիտի ոտանան ռատիսան գեղարուեստագիրներ, վաւերացուած մարմնի կողմէ :

ը պիտի արձանագրուին ՇԱՄԱՏԵԱՆԻՆ մէջ իր բեմական մասնակցողներու անկարող են իրենց ցանրի դիւրութիւնը կ'ընայիս 20, 1935-ին վճարութեամբ :

ը Համա-Քղեցիականի նախուժներ չկան, այդ ներքը իրենց նուէրները մարմինն :

անունով՝

Keghi

ժողի Մարմնի՝

Նախագահ

ՊԵՐՊԵՐԵԱՆ

9(-91.99) 28967.  
W-81 Արտեսագրութեան  
հասցէ- Ինքնաբաւ  
այն անբաղձալի  
մարմնի



ՄՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱ-ՔՂԵՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ


ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԳԱՄԱՌՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ



ԳՈՒՄԱՐՈՒԱԾ՝

1934 ՅՈՒՆԻՍ 30 ԵՒ ՅՈՒԼԻՍ 1-2-ԻՆ


ՏԻԹՐԱՅԻԹ, ՄԻՇ.




և

ԵՈՐ ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

(39-րդ էջէն սկսած)



1937  
A II  
32191  
28967



## ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆԻՍՏ

1934, Յունիս 30-ի երեկոյեան . ժամը 6-ին . բացուեցաւ Համա-Քղեցիականի Անդրանիկ Համագումարը Տիթրոյթի մէջ, Ալէլիի Կիւլիզ Հօլի ընդարձակ սրահը :

Եկած էին պատգամաւորներ Ամերիկայի բոլոր այն քաղաքներէն որոնք ահաիւ աշխատանքի անցած նախանձախընդիր միտումներով այժմ կուղէին Նոր-Քղին գործնական Փագի մէջ գնել :

Կեդր. Գործ. Մարմնի նախագահ՝ ընկ. Յ Պէրպէրեան իր յուզիչ պատգամաճառով ցուցահանեց Անդրանիկ Համագումարի յառաջագրուելիք բոլոր աշխատանքները, դրուատեց բոլոր այն Քղեցիները, մասնաւորապէս որոնք Հակառակ աջէն ու ձախէն եկած պղտոր յարձակումներուն՝ կարողացեր էին իրենց պաղտորիւնութեամբ և գիտակից կորովով Հարթելու շրջապատի դժուարութիւնները եւ Համա-Քղեցիականի գաղափարը իր առարկայական հիմունքներով դարձնել Քղեցի մեծամասնութեան սեփականութիւնը . Ապա հրաւէր կարգաց բոլոր պատգամաւորներուն, որ երբ իրենց ինքնութեան թուղթերը կը հաստատուն իւրաքանչիւր պատգամաւոր՝ առանց զգացական թելադրանքներու հոսանքին անձնատուր՝ պաղտորիւն եւ Սառը գիտակցութեամբ վերլուծման բովէն անցնէ իւրաքանչիւր հարց և մանր . խնդիր եւ Համագումարին հեղինակութիւնը աւելիով զօրացնէ ու հզօրացնէ :

### ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐՈՒ ՃՇԴՈՒՄ

ՏԻՐՊՕՐՆ ՄԻՉ .— Արտաշէս Ասատուրեան Պատգամաւոր-Մամբրէ Ամիրխանեան եւ Անդրէաս Վարդանեան Խորհրդատուներ : 17 Քղեցիներէ բաղկացած Մասնաճիւղ մը, որը կարճ շրջանի մէջ, յաջողեց էր \$110.00-ի գումար շահ ձեռք բերել եւ բերած էր իր պատգամաւորի հետը՝ դնելու Անդրանիկ Համագումարի սեղանին : Մասնաճիւղի գանձը, սակայն, տակաւ կը մնար քսան տօլարի գումար մը, որը ևս խոստացաւ անմիջապէս փոխադրել Կ. Գ. Մարմնին :

Սէն Դ ԼՈՒԻՉ և Ի. Ս. Մ. ԼՈՒԻՉ.— Իր վաթսուներորուայ կեանքին մէջ կարողացեր էր \$419.00 ընդհանուր եկամուտ յառաջադրել, 77 անդամներով: Համագումարի սեղանին Ս. Լուիզը դրաւ \$177.00 տօլար: Ունէր չորս պատգամաւորներ, ընկերներ՝ Ա. Եղիկեան, Ա. Նորսիկեան, Սողոմոն Ովոյեան եւ Մ. Օսէեան:

ՎԱՅԹՆՍՎԻԼ ՄԷՍ.— Համաքղեցիականի հնագոյն մասնաճիւղը, իր 30 անդամներով կարողացեր էր զուտ շահ ապահովել \$183.00 տօլարի բացառիկ գումար մը, որմէ \$75.00 տօլար իր պատգամաւորներու միջոցաւ յանձնեց Համագումարի Սեղանին, իսկ գանձը կը մնար \$108.00 տօլար եւս, որ յետ վերադարձածնուն պատգամաւորները խոստացան փութացնել կեդրոն:

Պատգամաւորներն էին ընկերներ՝ Յովհ. Մոսկոֆեան և Պորէն Հալաճեան:

ՇԻՔԱԿՕ ԻԼԼ.— Վեց ամսուայ կեանք ունեցող մասնաճիւղ, որ մինչեւ ցարդ կեդրոն զրկած էր \$52.00, մասնաճիւղի գանձը կը մնար դեռ \$48.00 տօլար եւս, անմիջապէս կեդրոն յղելու խոստումով:

Պատգամաւորներն էին ընկերներ՝ Բժ. Ա. Իգնատիոսեան եւ Սիմէոն Պլաւեան:

Ս. ՔԱԹԱՐԻՆՍ, ՔԱՆԱՏԱ.— Այս մասնաճիւղը չ'կրնալով ուրոյն պատգամաւոր զրկելու, իր ձայնը զրկած էր ընկ. Մուշեղ Շամալեանին, իսկ կեդրոն զրկած էր \$20.00: Պատգամաւորը յանձնառու եղբւր իր զեկոյցին մէջ յիշեցնել վերոյիշեալ մասնաճիւղին, որ գանձը մնացած դրամները փոխադրեն կեդրոն, եւ անկից ալ ի. Հայաստան:

ՀԱՅԼԸՆՏ ՓԱՐՔ, ՄԻՉ.— Տիթրոյթի մասնաճիւղի կազմութեան ժամանակ իր նիւթական եւ բարոյական ոյժը կեդրոնացուցած է այս մասնաճիւղին մէջ, բայց վերջէն նրկատի ունենալով տեղի հեռաւորութիւնը, կազմած է ուրոյն մասնաճիւղ վերոյիշեալ անունով և զրկած էր իր պատգամաւորը յանձին ընկեր Ռուբէն Շահինեանի:

ԿՐԱՆԻԹ ՍԻԹԻ, ԻԼԼ.— Նորակազմ մասնաճիւղ, տակաւին ֆինանսական և ոչ մէկ գործառնութիւն, Համա-Քղեցիական սկզբունքը որդեգրող մասնաճիւղ, իր ձայնը տուած էր ընկերուհի Եսթեր Եղիկեանի:

ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՆ.— Ֆրանսայի մէջ Համա-Քղեցիականը ունի երկու մասնաճիւղ, Ս. ԼՈՒԻ ԵՆ ՄԱՐՍԷՅԷԼ, այս Համագումարէն անմասն չ'մնալու համար ՁԱՅՆ Ղրկուած էր Կ. Գ. մարմնին, որ նա ալ բաշխած էր հետեւեալ ընկեր ընկերուհիներուն՝ Արմէն Վարժապետեան, Վրթանէս Չաւտէրեան և Խասվարդ Մուրատեան:

Ֆրանսայի շրջանը ի գիտութիւն Համագումարին կը յայտարարէր, որ ինք Համա-Քղեցիականի անունով արդէն իսկ Խ. Հայաստանի ՊԵՏՐԱՆԿԸ 3000 Ֆրանք փոխադրեր է և կը խոստանայ յետ այսու աւելին ընել:

ՏԻԹՐՈՅԻԹ, ՄԻՉ.— Այս մասնաճիւղը կ'արժէ ըսել կորիզը դարձաւ Համա-Քղեցիականի շարժման, ունէր 110 անդամներ, Կեդրոն փոխադրեր էր \$550.00 տօլար, պատգամաւորներ ունէր հետեւեալ ընկերները՝ Ս. Նորատունկեան ընկերուհի՝ Նազիկ Մուշեղեան, Յ. Ժամկոչեան, Գ. Մարտիրոս և Գ. Աւագեան:

Կ. Գ. ՄԱՐՄԻՆ.— Կ. Գ. Մարմնի ընդհանուր կազմի կողմէ իրր ներկայացուցիչներ կը ներկայանային ընկերներ՝ Յ. Պէրպէրեան և Ա. Մուշեղեան:

#### ԳԻՒՂԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

ՉԱՆԱԽԶԻ.— Չանախչիի ներկայացուցիչը, յանձին ընկ. Սող. Օսէեանի, կը բացատրէ թէ ի'նչ նախադրեալներու հիմունքին վրայ յենուած Չանախչիին կը ներկայանայ այսօրուայ Համագումարին: Պատմական ընկելով նախկին Համա-Քղեցիականներու իրերամերժ դրութեան, որու իբր արդիւնք զանազան շրջաններու մէջ կազմուած Համա-Քղեցիականները մոմի պէս հանգան իրարու ետեւէ, ու ապա յայտնեց թէ իր գիւղի 1926-ի Ս. Լուիզի մէջ կայացած պատգամաւորական ժողովը անցուցեր է յստակ տրամադրութիւն

այն Համա-Քղեցիականի հանդէպ, որ կը ճկնի Խ. Հայաստանի մէջ Նոր-Քղի մը կառուցել և հետեւաբար, այդ տրամադրութեան հիման վրայ նոյն տարին իր գիւղին մայր գումարը փոխադրած է Խ. Հայաստանի ԳիւղԲԱՆԿԸ: Բայց որովհետեւ մինչեւ Հին Համա-Քղեցիականները չը ցուցուցին գործնական յառաջադրութիւններ և մնացին մեռեալ տառ, ու այսօրուայ Համա-Քղեցիականը իր որդեգրած ուղիով եւ ներշնչելի գործառնութիւններով արդէն իսկ սկսած է մասսայի մէջ ուրոյն հաւատք ներշնչել գործի յաջողութեան տեսակէտէն, ուստի Չանախչին կուգայ հանդիսաւորապէս այս անդրանիկ Համագումարի սեղանին դնել ԳիւղԲԱՆԿԻ իր ՁեկՈՅՑ-ԸՍՏԱՑԱԿԱՆԸ եւ նուիրել գայն Նոր Քղիի շինութեան գործածելու: Ահա մեր ՍՏԱՑԱԳԻՐԸ:

Գիւղ. ԲԱՆԿԻ ՁեկՈՅՑ — Ստացականը ձեռքէ ձեռք անցուեցաւ բոլոր պատգամաւորներու և հանդիսականներու միջեւ, և բոլորն ալ հիացան Չանախչիի այս օրինակելի ելոյթին: Այդ ստացականի վրայ նշուած էր 11, 768, 31 բուսլի:

Այս ելոյթին անջև Համագումարը կ'ստանար կորովի թափ:

ՔՂԻԻ ՔԱՂԱՔ — Քղի քաղաքի վերաշինացի կողմէ ընկ. Մխիթար Շահինեան ելոյթ ունեցաւ իր միութեան Խորհրդային Հայաստանի պետական բանկի ԱԽԱՆԴԱՊԱՀԻ ԹՈՒՂԹՈՎ: Նա ևս դրւատիքը ըրաւ Նոր Քղիի շինութեան, ապա մատնանշեց բոլոր այն կարելիութիւնները, որոնց լոյսին տակ Համա-Քղեցիականը կրնար ուռճիլ և բարելաւուիլ: Դրաւ իր Միութեան Ա Խ Ա Ն Դ Ո Պ Ա Հ Ի — Թ Ո Ւ Ղ Թ Ը 6600 բուսլի Համաքղեցիականի տրամադրութեան տակ գործածելու այդ դրամը Նոր Քղիի շինութեան: Սա երկրորդ խոշոր անկիւնաքարն էր, որ խլեց ուռուանե՛ր և ծափեր:

ՀԷՐՏԻՖ ԳԻՒՂ — Այս Գիւղի վերաշինաց և Ուսումնասիրաց Միութիւնը իր մէկ ընդհանուր ժողովով որոշեց է անմիջապէս Համա-Քղեցիականին տրամադրել § 500 տալեր,

իսկ ամբողջ հարստութիւնը մաս առ մաս : Երբ այս յատարարութիւնը քաւ այդ գիւղի ներկայացուցիչ ընկ. Ղաղար Մեծիկեան՝ համագումարը միանուագ ծափերով և ողջոյններով ընդունեց Հէրտիֆի Միութեան ելոյթը : Հէրտիֆը ունէր երկու ներկայացուցիչներ, ընկերներ՝ Ղաղար Մեծիկեան և Խորէն Օյնոյեան :

Առիւթ Գիւղ. — Այս գիւղի վերաշինացը թէև ներկայացուցիչ չունէր՝ բայց ունէր իր Կ. Վարչութեան նամակը, որը յատակ լոյս կը սփռէր իր դիրքի և կամեցողութեան մասին՝ հանդէսը Համա-Քղեցիականի :

Առէք Գիւղը իր միութեան պատգամ, ժողովի մէջ յատակ և բիւրեղ տրամադրութիւն բանաձեւեր է, որու համաձայն Առէք Գիւղը տրամադիր է իւր գանձէն ամէն անգամ \$100 տօլար տալ Համա-Քղեցիականի իւրաքանչիւր \$400 տօլար եկամուտին մինչեւ իր վերջին սէնթը :

Համագումարը բուռն կերպով ծափեց Առէքոց այս շինիչ քայլը :

ՀՕԿ — Վերաշինական այս Համագումարին Ամեր. ՀՕԿի կեդր. Վարչութիւնը ներկայ կըլլար իր ներկայացուցիչով՝ յանձին Հօկի գործիչ քաղաքացի Գ. Գանձանակեանի :

Այս բոլոր ստուգումներէ վերջ՝ Համա-Քղեցիականի անդրանիկ համագումարը կ'սկսէր իր հիմնական աշխատանքներուն՝ 27 պատգամաւորներու, երկու խորհրդատուներու և հարիւրաւոր հետաքրքիր Քղեցիներու ներկայութեամբ :

Ա — Նիստին անցնելէ առաջ՝ նախ որոշուեցաւ ընդունիլ տարբեր-տարբեր նախագահներ, այսինքն իւրաքանչիւր նիստ զեկավարէ տարբեր նախագահ, և քանի որ ծրագրուած էր Համագումարի հարցերը սպառել երեք նիստերով, հէնց ստոր համար ալ ընտրուեցաւ երեք նախագահներ՝ ընկերներ

Բժ. Ա. Իգնատիոսեան

Արտաշէս Ասատուրեան

Արամ Նորսիկեան

Հարցը երբ քարտուղարութեան շուրջ անդրադարձաւ դիւա-

նական անպատեհութիւններ շի ծագելու համար որոշուեցաւ  
ընդունիլ մնայուն քարտուղարութիւն. ընտրուեցան ընկեր  
ներ՝ Ա. Եղիկեան Ա. քարտուղար

Ա. Մուշեղեան Բ. »

Դիւանը անցաւ իր աշխատանքներուն շարքէ երեկոյեան  
ժամը 8 ին: Համագումարի Ա նիստի նախագահը ընկ. Բժ.Ա.  
Իգնատիոսեան բացաւ համագումարը իր պատշաճ և խրախու-  
սիչ պատգամաճառով, որու վերջընթերը եղաւ, — «Մեծ գոր-  
ծի կանչուած ենք, պէտք է արդարացնենք թէ մենք Քղեցի  
ենք, և ի հարկին աւերակներէն կրնանք հրաշակերտներ կա-  
ռուցել»: Յուդիչ և իմաստալից նշանաբանը. որմէ վերջ ըն-  
թացք տրուեցաւ զանազան յանձնախումբերու ընտրութեան  
Համագումարի աշխատանքներուն դիւրութիւն ընծայելու  
համար:

Որպիսիք են՝

ՀԱՐՑԵՐՈՒ ԴԱՍԱԻՈՐՄԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ.— Միա-  
ձայնութեամբ ընտրուեցան հետեւեալ ընկերները՝

Ս. Նորատունկեան, Արմէն Վարժապետեան և Արտաշէս  
Ասատուրեան:

ՀԱՇՈՒԵՔՆԻՉ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ.— Յովհ. Մոսկոֆեան  
Արամ Նորսիկեան և Գուրգէն Մարտիրոս:

ԵՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ  
Բժ. Ա. Իգնատիոսեան, Յարութիւն Պէրպէրեան, Ս. Նորա-  
տունկեան, Յարութիւն Ժամկոչեան և Սիմէոն Խլաւեան:

ԲԱՆԱԶԵԻՆՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ.— Սողոմոն Ուլոյեան,  
Գրիգոր Աւագեան և Ա. Եղիկեան:

ԿԵԴՐ. Գ. ՄԱՐՄԵՆԻ ԹԵԿՆԱՄՈՒՆԵՐ ՆՇԱՆԱԿՈՂ ՅԱՆՁ.  
Խորէն Հալաճեան, Նազիկ Մուշեղեան և Գ. Մարտիրոս:

Այս վերջին Յանձնախումբի գործը դիւրացնելու հա-  
մար Համագումարը անդրադարձաւ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻԻ Հարցին  
և միաձայնութեամբ որոշուեցաւ ՏԻԹՐՈՅԻԹԸ սրպէս կեդ-  
րոնատեղի:

ԳԻՒՂԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԻՐԱՒԱՍՈՒ  
ՀԱՆԳԱՄԱՆՔՈՎ ԸՆԴՈՒՆԻՒ—ՁԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Համագումարի նախապատրաստական նիստին մէջ երբ գիւղական ներկայացուցիչները ընդառաջեցին Կ. Գ. մարմինն ներկայացնելու համագումարին և միաժամանակ տրամագրելով իրենց ֆոնտերը Համա-Քղեցիականին ինքնըստինքեան կը դառնային Համա-Քղեցիականի շարժման հզօր ակոյեաններ, ուստի պատգամաւոր ընկերները գիւղական ներկայացուցիչներու այս խիստ գնահատելի շինարարական ելոյթը Լաւագոյն առհաւատցեայ նկատելով նոր Քղիի շինութեան՝ այդու լիազօրեցին զանոնք մասնակցելու Համագումարի աշխատանքներուն ԻՐԱՒԱՍՈՒ-ՉԱՅՆՈՎ :

Համագումարի առաջին աշխատանքը եղաւ ողջոյնի երկու բանաձեւեր գծել, մին ուղղուած Խ. Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ ընկ. Ս. Տէր Գաբրիէլեանին, իսկ միւսը Ամերիկայի Երջանի Հօկի Կեդրոնական Վարչութեան :

ԺՈՂԿՈՄՄՈՐ ՀԻ ԲԱՆՍԶԵՒԸ

«Խ. Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ՝  
«Ընկ. Ս. Տէր Գաբրիէլեան»

Համա-Քղեցիական Միութեանս Անդրանիկ Համագումարը գումարուած Յունիս 30 եւ Յուլիս 1—2, 1934, Ամերիկայի Տիթրոյիթ քաղաքին մէջ՝ ողջունելով Խ. Հայաստանի Բանւորա-Գիւղացիական մարտական կառավարութիւնը եւ անոր կառուցման հարւածային թափը, զբաղուելով միանգամայն Խ. Հայաստանի մէկ յարմարագոյն վայրին մէջ «Նոր Քղի» Աւան մը կառուցանելու կանխապատրաստականութեան աշխատանքներով՝ խօսք կուտայ և կը հաւաստիացնէ Խ. Հայաստանի Բ.-գիւղացիական կառավարութիւնը, որ միշտ վերաշինական պատենչի վրայ կանգնած՝ ծաւալուն թափով պիտի բոլորէ Քղեցի աշխատաւորութիւնը «ՇինծնՔ ՆՈՐ-ՔՂԻՆ» Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ» նշանաբանին մէջ : Եւ պիտի ջանայ արդարացնել վերացնելու Քղեցի աշխատաւորութեան մէջէն բոլոր այն արգելքները, որ կը խմորեն հեռու պահելու զանոնք իրարմէ և Խ. Հայաստանէն :

Սրտագին կրկնակի ողջոյններով՝ Համա-Քղեցիականի անդրանիկ Համագումարի դիւան :

Նախագահ

Քարտուղար

ԲԺ. Ա. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

Ա. ԵՂԻԿԵԱՆ

«ՀՕԿ-Ի ԱՄԵՐ. ՇՐՋԱՆԻ Կ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ»

Համա-Քղեցիական Միութեանս անդրանիկ Համագումարը հաճոյքով կարճաւագրէ Ձեր պաշտօնական ներկայացուցչութիւնը եւ մասնակցութիւնը Համագումարի աշխատանքներուն՝ յանձին քաղաքացի Գ. Գանձանակեանի :

«Համագումարս լսելով եւ տեղեկանալով քաղաքացի Գանձանակեանի զեկոյցները Խ. Հայաստանի աշխատաւորական իշխանութեան ընծայած աջակցութիւնը Հօկ-ի միջոցաւ այլ եւ այլ Հայրենակցականներու շինարարութիւններու վերաբերմամբ՝ կը գնահատէ Հօկ-ի կամեցողութիւնն ու աշխատանքը և տարակոյս չունի որ մեր յետագայ աշխատանքներու շուրջ պիտի յայտնաբերէ նոյն ոգին ու կամեցողութիւնը :

Համագումարս կը խոստանայ իր կարգին, Ձեզ հետ միասին զօրավիգ ու պաշտպան կանգնիլ այն Հայրենիքին, որու մէջ վաղը պիտի կառուցուի ՆՈՐ-ՔՂԻՆ եւ հոն պիտի ամփոփուին Հին-Քղիի խլեակները, որ պիտի ունենան աստիճանական զարգացմամբ ազատ կուլտուրա եւ առոյգ տընտեսութիւններ :

Լաւագոյն ողջոյններով Համա-Քղեցիական Անդրանիկ Համագումարի Դիւան :

Նախագահ

Քարտուղար

ԲԺ. Ա. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

Ա. ԵՂԻԿԵԱՆ

Կարդացուեցաւ Համագումարին զրկուած շնորհաւորական հեռագիր մը Պետ. Հ. Կ. Խաչի Տիթրոյթի 6 քոյր մասնաճիւղերէն, Սուրէն Բարաղամեանի նամակը կուլֆէն, իսկ Հայլընտ Փարքի Հօկ-ի ներկայացուցիչների բերանացի ողջոյնները բոլորն ալ ընդունուեցան դղրդագին ծափերով :

Համագումարը ասկէ յետոյ ունեցաւ մէկ ժամուայ

դադար՝ ժամանակ տալու՝ նշանակուած յանձնախումբերուն որ իրենց քննիչքները դասաւորեն :

Համագումարը վերաբացուեցաւ ժամը 9.30-ին :

Կարդացուեցաւ ներկայ բացական, 26 ներկայ և մէկ բացակայ :

Արձանագրութիւնը կարդացուելով փոքրիկ դիտողութենէ մը վերջ վաւերացուեցաւ միաձայնութեամբ :

Հարցերու դասաւորման յանձնախումբը համագումարին եկած հարցերը քննութեան բովէն անցնելէ վերջ՝ խտացուած ձևով ներկայացուց ժողովին հետևեալ բովանդակութեամբ :

Ա.-- Գործադիր Մարմնի Զեկույց :

Բ.-- Մեր Դիրքը Հանդէպ Գիւղական Միութեանց

Գ.-- Նոր-Քղի Աւանի Վայր Նշանակելու Խնդիր :

Դ.-- Ոչ Քղեցիները Անդամագրելու Հարց :

Ե.-- Իրամներու Անմիջական Առաքում Ի՛նչպիսի Խ. Հայաստան :

Զ.-- Տարեգրքի Հրատարակում :

Է.-- Գործիչի Հարց :

Ը.-- Կ. Գ. Մարմնի Գանձապահի Հարց :

Թ.-- Անդամատուրքի Քանակի Բարցում :

Ժ.-- Կազմ. Կանոնագրի Յօդ. 8-ի Ստորաբաժանում Զ-ը

Առարկելի :

ԺԱ.-- Խ. Հայաստան Ներկայացուցիչ Ղրկելու Հարց :

ԺԲ.-- Նորընտիր Գ. Մարմնին Օժանդակ Խորհրդատու

Անդամներ Բոլոր Ծրջաններէն :

ԺԳ.-- Խորհրդանշանի Փոփոխութիւն :

ԺԴ.-- Տասը Հազար Տօլարի Միամեայ Քէմփէյն :

ԺԵ.-- Գործադիր Մարմնի Ընտրութիւն :

ԺԶ.-- Բոլոր Հայրենակցականներու Համագումար Մեր Նախաձեռնութեամբ :

ԺԷ.-- Համա-Բարձ. Հայքեան Հեռանկար :

Օրակարգի առաջին հարցը յետաձգուեցաւ յետագայ նիստերէն միոյն՝ Կ. Գ. Մարմնի Քարտուղարի անհրաժեշտ

գործով ժողովէն բացակայութեան համար :

Բ. - Մեր ԴիրՔը ՀԱՆԴԷՊ ԳԻԻՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՑ .-

Այս հարցը իր բարդ և բազմակողմանի երեւոյթներով պատգամաւորներու սուր քննարկին ենթակայ եղաւ : Եղան վիճելի և անվիճելի առարկութիւններ , որոնք իրենց յատկանշական կողմերով կարժէ նշել այստեղ իբր տուրք Համագումարի աշխատանքներուն :

ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ . Ա. - Գիւղական միութիւնները և զիրենք սնուցանող պատճառները թէպէտեւ իրաւականօրէն գոյութիւն չունին , բայց իրենց նախկին գործառնութիւններէն աւանդ մնացած գումարները զիրենք կը դնէ փաստաւոր գոյութեան հիմուքին վրայ : Հետեւաբար , երբ նոր Գղին կը դառնայ ընդհանուր առանցքը և յենարանը բոլոր Գղեցիներու խտացած հեռանկարին , վերաշինացները իրենց տրամադրութեան տակ եղած գումարները յատկացնելու են նոր Գղին մէջ թաղ մը կամ շէնք մը շինելու համանուն վերաշինացի անուսով և ապա ինքստինքեան տարրալուծուելով Համաքղեցիականի մէջ կը դառնայ անոր անբաժան մասնիկը :

ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ Բ. - Եթէ վերաշինաց միութիւնները սկզբնական շրջանին չեն կրնար իրենց գումարները տրամադրել անմիջապէս . բայց ընդհանուր գործին խթան հանդիսանալու համար՝ հրապարակ դալու են իբր օժանդակներ և միանգամայն իրենց մայր գումարէն մաս առ մաս տրամադրելով յառաջագրուած նպատակին .-

ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ Գ. - Համաքղեցիականը իրաւականօրէն և փաստօրէն Համագումարէս ճանչցուելով՝ կը դառնայ բոլոր Գղեցիներու հեռանկարը ցայտեցնող միակ օրգանական կազմակերպութիւնը , կը ժխտէ ճանչնալ բոլոր հայրենակցականները իրաւական մարմիններ՝ ընդունելով սակայն , որ որ անոնք կրնան դառնալ Համաքղեցիականի հաւաքական նւապատակի օրգանական մասնիկներ , և այս մասնիկները զիրար զօտելու և յարաբերական տաք միթնոլորտը ստեղծելու համար , յաջորդ կեդր . գործ . մարմնոյն պարտականութիւն կիյնայ

մերձեցման գետին պատրաստել և բոլոր այդ մասնիկները իրենց պատճառներով մէկտեղ համադրել Համաքղեցիականին շուրջ :

ԱՌՍՁԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. - Համաքղեցիական միութեան գիրքերը Հայրենակցականներու մէջ զօրացնելու համար՝ թելադրելու է այս միութեան անդամներուն, որ մտնեն իրենց պատկանած վերաշինացներու մէջ, հաշուէառուի նըման քննարկի անցնեն իրենց վարչութիւններու եւ ընկերներու գիրքն ու քաղաքականութիւնը Համա-Քղեցիականի նպատակին շուրջ, եթէ խոտոր է անոնց գիրքը՝ աշխատելու են որ զանոնք պրօպականդայի առանձնապատուկ շրջանադարձով բերել Համա-Քղեցիականի համեմատական ուղիղ գծին զուգորդել, այսպիսով ՆերԳԱՇՆԱԿՈՒԹԻՒՆ, ՄԵՐՁԵՑՈՒՄ և ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՄԲ յառաջացնելու է ուղղակի և անուղղակի միջոցներով մեր ընդգրկած ուղեգծին շուրջ :

Այս առաջադրութիւնները իրենց ընդհանուր գծերով պատկերուելէ վերջ՝ Համազումարը իբր եղրակացութիւն ընդունեց հետեւեալ բանաձեւը.—

—Նկատելով, որ մեր ինն ամսուայ բարեացակամ վերաբերմունքը հանդէպ գիւղական միութիւններուն յառաջացուցած է փաստական տուիքներ Համա-Քղեցիականի մեծ գործին շուրջ, Համազումարս կորդեգրէ շարունակել նոյն բարեացակամ քաղաքականութիւնը գիւղական բոլոր միութիւններուն հանդէպ, որոնք տակաւին պակաս շահագոգրութեամբ կը վերաբերուին միութեանս նպատակին՝ մինչև որ մեր գործնական աշխատանքներու ջանադրութեամբ կարողանանք բոլորին շուրջ ստեղծել նոյնանման մտածելակերպ :

Հարց Գ.ը տուեալ պատճառներով յետաձգուեցաւ յաջորդական նիստերէն մէկուսն :

Գ. - ՈՉ - ՔՂԵՑԻՆԵՐԸ ԱՆԴԱՄԱԳՐԵԼՈՒ ՀԱՐՑ. — Այս հարցը ունէր իր վերապահ կողմերը, որոնք սակայն անկողմընակալ քննարկի լսոյսին տակ անբաւական նկատուելով՝ Համազումարը միաձայնութեամբ ընդունեց ոչ-Քղեցիներու

անդամագրութիւնը նկատել օրինական եւ ճանչնալ զանոնք միութեանս իրաւասու անդամներ առանց վերապահութեան :

Ե. — ԴՐԱՄՆԵՐՈՒ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԱՌԱՔՈՒՄ Խ. ՀԱՅԱՍՏԱՆ. — Որոշուեցաւ ընթացիկ այդ գործառնութիւնք թողուլ նորընտր Գործ. Մարմինն ընդհուպ գործնականացնելու կանոնագրի Յօդ. ԺԲ-ի 2րդ. ստորաբաժանումը նոյնութեամբ :

Զ. — ՏԱՐԵԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ. — Զանազան բացատրութիւններէն յայտնաբերուեցաւ, որ փոխան Տարեգրքի՝ թեւադրել յառաջիկայ Կ. Գ. Մարմինն՝ համաձայն իր գործերու դասաւորումին՝ տուեալ պայմաններու տակ հրատարակել պարբերական Տեղեկագրեր կամ Զեկոթներ՝ մատչելի դարձնելու միութեանս ներգրաւումներն ու գործառնութիւնները համայն ֆղեցիներուն :

Է. — ԳՈՐԾԻՉԻ ՀԱՐՑ. — Այս առթիւ ունենալով կանոնագրին տրամադրութիւն (տես յօդ. Տ, ստորաբաժանում 3-րդը), որոշուեցաւ թեւադրել Կ. Գ. Մարմինը, որ ի պահանջել հարկին գործադրէ կանոնագրային այս տրամադրութիւնը :

Ը. — Կ. Գ. ՄԱՐՄԻՆԻ ԳԱՆՁԱՊԱՀԻ ՀԱՐՑ. — Այս հարցը բերուած էր ուղղակի անդրադառնալու գանձի ապահովութեան շուրջ. կամ այն է ըսել գանձապահը դնել օրինական երաշխաւորագրի (պօստի) տակ : Թեր ու դէմ արտայայտութիւններէ վերջ՝ Համագումարը յանգեցաւ հետեւեալ եզրակացութեան միաձայնութեամբ :

Որ՝ ի նկատի ունենալով կանոնագրի յօդ. ԺԲ-ի 2-րդ ստորաբաժանումը արդէն իսկ որոշ եւ մէկին երաշխիք կ'ընձեռէ միութեանս գանձի ապահովութեան, Համագումարը ի յաւելում այս տրամադրութեան ընդունեց, որ յաջորդ Գործ. Մարմինը Համա-Ֆղեցիական անունով հաշիւ բանայ տեղական բանկերէն միոյն մէջ և լիազօրէ բանկը՝ երբ իւրաքանչիւր անգամ Գործ. Մարմինը դրամ կուզէ հանել բանկէն ԱՅԴ ԼԻՆԵԼՈՒ Է ՄԻԱՅՆ ՈՒ ՄԻԱՅՆ Ի ՀՐԱՄԱՆԻ Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ, ԲԱՅՑ Ի ՀԱՇԻՆ ՆՈՐ-ՔՂԻԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԻՆ :

Թ. — ԱՆԴԱՄԱՏՈՒՐՔԻ ՔԱՆԱԿԻ ԲՍՐՁՈՒՄ. — Այս հար-  
ցը ունէր երկու երես, ամսականի ՅԱԻԵԼՈՒՄ և ՅԱՊԱԻՈՒՄ,  
երկու երեսներն ալ ունէին իրենց պաշտպանները ուրոյն  
պատճառաբանութիւններով: Համագումարը լսելով երկու  
կողմերի պաշտպանողականները, որոշեց այս հարցը լուծուած  
համարել պահելով ի զօրու կանոնագրի յօդուած Զ-րդի  
3-րդ ստորաբաժանումը:

Նիստը փակուեցաւ գիշերուայ ժամը 12-ին, յաջորդ  
առաւօտ 9-ին սկսելու որոշումով:

Նախագահ

ԲԺ. Ա. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

Ի դիմաց Դիւանի

Քարտուղար

Ա. ԵՂԻԿԵԱՆ

ՆԻՍՏ Բ.

Երկրորդ նիստը բացուեցաւ ընկ. Արամ Նորսիկեանի  
նախագահութեամբ, Յուլիս 1-ին, Կիրակի առաւօտ ժամը  
9-ին, նոյն ժողովատեղիին մէջ:

Ճշդուեցաւ ներկան եւ բացական, գտնուեցաւ որ 26  
ներկայ և մէկ բացակայով Համագումարը կանցնէր իր աշ-  
խատանքներուն:

Հետաքրքրօրէն կարդացուեցաւ նախորդ նիստի արձա-  
նագրութիւնը եւ առանց փոփոխութեան վաւերացուեցաւ:

Համագումարիս եկած շնորհաւորական եւ քաջալերա-  
կան նամակները կարդացուեցան, — Շիքախոյի Հօկ-ի մասնա-  
ճիւղէն և Համա-Երզնկացիական Կեդր. վարչութենէն: Երկու  
նամակներն ալ Մտփողջոյններով դնահատուեցան:

Ժ. — ԿԱԶՄ. ԿԱՆՈՆԱԳՐԻ ԵՕԴ. Ե-ի ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ  
2-Ր ԱՍԻԱՐԿԵԼԻ Է. — Այս հարցը կապ ունենալով կազմական  
կանոնագրի վերամշակման Յանձ. դործին հետ, Համագու-  
մարը ընդունելով սակայն հարցի առարկելի կողմը իր բովան-  
դակութեամբ՝ թեւադրեց Յանձնախումբին, որ հարկ ըլլալիք  
բարեփոխումը մտցնէ այդ ստորաբաժանումին մէջ:

Հարց Գ.ը և ԺԱ.ը ըլլալով իրարու կապակից հարցեր,  
միախառնուեցան և ստացան մէկ լուծում. — Այս երկու հար-

ցերն ալ տեղիք ունէին ընդլայն լուսաբանութիւններու Խ. Հայաստանի պաշտօնական ներկայացուցիչի մը կողմէ և որովհետեւ Համագումարին մէջ իր ուրոյն տեղը ունէր Ամեր. Հօկ-ի ներկայացուցիչ քաղաքացի Գ. Գանձանակեան ու իբրև իրազէկ մէկը Խ. Հայաստանի իրադարձութեանց, առաջարկուեցաւ որ Նա տայ իր լուսաբանութիւնները. ընկեր Գանձանակեան պարզ և մէկին ընդգծումներով բացատրեց ՀամաՔղեցիականի որդեգրելիք ի՞նչ ինչ գծերը Խ. Հայաստանի կառավարութեան հետ փոխյարաբերութեան շրջանին ըլլայ դրամական գործառնութիւններու և վայրի ընտրութեան մէջ : Համագումարը ընկերոջ լուսաբանութիւններէն վերջ հարցասիրական թօնով ունեցաւ իր սեփական անդրադարձումները և իբր եզրակացութիւն ընդունեց հետեւեալ բանաձեւը :

— Ընոր-Քղիի վայրի ընտրութեան անմիջական խնդիրները ընթացիկ աշխատանքներով կիրառելու համար՝ Համագումարս կորոչէ և Կ. Գ. Մարմինն կը յանձնարարէ որ՝

1.- Բանակցութեան եւ յարաբերութեան մտնել Հօկ-ի գլխաւոր վարչութեան հետ անմիջապէս :

2.- Նշանակել յանձնախումբ մը Խ. Հայաստանի մէջ լաւագոյն և յարմարագոյն Քղեցիներէ և մանրամասն տեղեկութիւններ քաղել ի հաշիւ նախապատրաստական աշխատանքներուն :

3.- Վայրի նշանակման և յարակից խնդիրներու համար սկզբունքով ընդունիլ ներկայացուցիչի մը օգտակարութիւնն ու պատշաճութիւնը Ամերիկայէն և նախնական կատարուելիք աշխատանքներու հասունութեան պարագային իրաւասութիւն տալ Կ. Գ. Մարմինն ընտրելու Խ. Հայաստանի ղրկուելիք իր ներկայացուցիչներու եռապատիկ ցանկը եւ զայն յանձնելով մասնաճիւղերու ուղարկութեան, անոնց հաւանութեան պարագային միայն Խ. Հայաստանի ղրկուելիք ընտրեալ ներկայացուցիչը ներկայացուցչական հանգամանքը կրնայ վսյելիլ և գնալ :

Ա.- ԳՈՐԾ. ՄԱՐՄՆԻ ԶԵԿՈՅԾ. — Գործադիր մարմնի

քարտուղար ընկեր Ա. Մուշեղեան կարդաց այդ մարմնոյ  
 ց ամսուայ բարոյական եւ նիւթական աշխատանքներու հա-  
 մայննապատկերը :

Պէտք է նշել այստեղ, որ Համագումարը լսելով քար-  
 տուղարի ղեկույցը, այն եզրակացութեան հասաւ, թէ ՈԶԻՆ-  
 ՁԷՆ, ԻՆՁ ստեղծելու յարանուն աշխատանքները զոր յայտ-  
 նարերէր էր Գործ. Մարմինը իր հաւաքական կազմով հաւատքի  
 եւ յոյսի ներշնչումներէ աւելի՛ պայծառ եւ կոթողացած իրա-  
 կանութեան մը ամէն երաշխիքները հասունցուցած եւ մարմնա-  
 ցուցած էր յանձին Համա-Քղեցիականի ութը մասնաճիւղերու  
 գոյութեամբ: Այսպիսով Գործ. Մարմինը Նոր-Քղիի հեռա-  
 ներկարը հեռանկարի հանգամանքէն հանելով՝ գործնական  
 հունի մէջ դրեր էր,

Համագումարը խանդավառ ծափող շոյններով գնահատեց  
 Գործ. Մարմնի Քարտուղարն ու Նախագահը յանձին ընկեր-  
 ներ՝ Ա. Մուշեղեանի եւ Յ. Պէրպէրեանի առանձնապէս, իսկ  
 ընդհանուր կազմը հաւաքապէս :

ԺԴ. -- ՏԱՍԸ ՀԱԶԱՐ ՏՕԼԱՐԻ ՄԻԱՄԵԱՅ ՔԷՄԲԷՅՆԸ. —

Այս հարցը Նոր-Քղիի բախտը բնորոշող ամենաէական հարցն  
 էր, որու գործնականացման համար պիտի խօսեր Քղեցի պատ-  
 դամաւորը եւ պիտի խօսէր յանդգնօրէն :

Տասը հազար տօլարը Նոր-Քղիի հիմնաքարը պիտի ըլ-  
 ւար, հետեւաբար այդ հիմնաքարը ձեռք բերելու համար  
 անհրաժեշտ էր գործնական յառաջադրութիւններու օձիքէն  
 բռնել: Փորձուեցաւ հարցը ընդունիլ լսկ սկզբունքային տե-  
 սակէտով եւ յանձնել նորընտիր Կ. Գ. մարմնին իր միջոցներով  
 եւ տուեալներով գործնականացնելու: Այս ձեւը անբաւական  
 նկատուեցաւ:

Թելադրուեցաւ անհատական, կալուածային, ապահովագրա-  
 կան, կատկային, շարժուն կալուածներէ եւ միութեան շրջա-  
 գիծէն դուրս մնացած գիւղական միութիւններու գումար-  
 ներով ամբողջացնելու յառաջադրեալ քէմփէյնի գումարը:  
 Այս միջոցները կրնային կողմնակի նախանիւթեր ըլլալ ընդ-

Հանուր գործի փլանային շարժման :

Յանձնարարական ձեւով առաջարկուեցաւ լիազօրեւ կ' Գ. Մարմինը նախաձեռնող ըլլալ քէմփէյնի բաշխման գործին , ի նկատի ունենալով մասնաճիւղերու համեմատական թիւը :

— Սթանուեցաւ անձնական նուիրատուութիւններու ձեռնարկին քննարկի հանգանակութեան սկսիլ , այս եւս անյաջող փորձ նկատուեցաւ :

Համագումարի այս խիստ շահեկան խտորումներու բովանդէին ընթացքին քով քովի կը հաւաքուին Ս . Լուիզի և Կրանիթ Սիթիի պատգամաւորները եւ կուտան վճռական որոշում մը , որ յետոյ խոշոր անկիւնադարձ նկատուեցաւ Համագումարէն հարցի դրական լուծման շարժառիթէն դիտելով :

Ս . Լուիզի և Կրանիթ-Սիթիի այս յոյժ շահեկան հարցը մասսայինը նկատելով՝ առաջարկ բերին , որ հարցը պէտք է իւրացնել տալ մասսային միմիայն անոր ներկայացուցիչներու միջոցաւ , այդու Ս . Լուիզի և Կրանիթ-Սիթիի իրենց ուսերուն կը վերցնէին ՏԱՍԸ ՀԱԶԱՐ ՏՕԼԱՐԻ ՔէՄՓէՅնէն ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏՕԼԱՐԸ :

Համագումարը մեղուի փեթակի նման բզզալ սկսաւ , զանազան մասնաճիւղերու պատգամաւորները առանձնացան խորհրդակցելու և իրենց վերցնելիք բաժիններու մասին խորհրդածելու : Հինգ բողոքի մէջ Համագումարը կը վերստանայ իր նախկին նորմալ դիրքը :

Բեմ կ'ուզայ մեծագոյն Տիթրոյթը իր ներկայացուցիչով և կ'ստեղծէ խանդավառութեան էն բարբը , անգերազանցելին , իր ուսերուն վրայ առնելով տասը հազար սօլարի քէմփէյնին կէսը . — \$5000ը :

Համագումարը կեռուփէր , անխառն զգացումներու ազնիւ ջրվէժումը կուսենար . ծափող ջրյններու անվերջ տարափին տակ կարծես հասակ կը քաշէր :

Շիքալօյի ներկայացուցիչը յայտարարեց , որ ներկայ տնտեսական աննախանձելի դրութեան ստեղծած քառսէն թէև շատ խոշոր ակնկալութիւն չէք կրնար ունենալ՝ ի նկատի

ունենալով նաև իր մասնաճիւղի վտիտ թիւը, բայց այս բաները ՄԵՄ ԳՈՐԾԻ գործնականացման հետեանքով ստեղծուած խանդավառութեան առջեւ իր մասնաճիւղն ալ ունի իր անական խօսքը՝ իր ուսերուն վերցնելով Տասը Հազար տօլարի միամեայ քէմփէյնէն հինգ հարիւր տօլարի գումար մը: Կրկին ծափեր եւ տօփուներ:

Վայթնովիլը անմասն չմնաց՝ այս խանդավառութենէն, տուաւ իր անկեղծ եւ ինքնաբուխ թելադրանքները, որոնք գովելի մատնանշումներ էին քէմփէյնի իրագործման փուլերուն:

Շատ ցաւեցաւ, որ իր մասնաճիւղը երբէք նախատեսած չըլլալով այս կարգի ելոյթներ, լիազօրական հանգամանք տրուած չէր իրենց. բայց տուին (պատգամաւորները) իրենց աղնիւ խօսքը միւս մասնաճիւղերու կարգին իրենք ալ պիտի ապահովեն նախանձելի տեղը Համա-Քղեցիականի այս միամեայ քէմփէյնի շրջագծէն ներս, որը առանձքն ու հիմնաքարը կրնանք նկատել մեր ընդհանուր նպատակին: Ծափեր եւ ուռուաներ:

Հեռաւոր Ֆրանսան ալ ունեցաւ իր ելոյթը իր պատգամաւորներու բերնով: Ֆրանսայի շրջանը արդէն իսկ այս նպատակին համար Խ. Հայաստանի Պետ. Բանկը ղրկած էր 3000 Ֆրանք եւ այս նոր շարժումին իր բաժինը բերելու նախանձախնդիր՝ խոստացաւ 3000 Ֆրանք:

Ս. Քաթարինոյի մասնաճիւղի պատգամաւորը ևս դըրուատելէ վերջ քէմփէյնի իրականացման լաւագոյն անդրադարձումները, խոստացաւ Սր. Լուսը Արարատին մօտեցնելու այս յոյժ կենսական քէմփէյնին իր մասնաճիւղը պիտի մղէ անդուլ աշխատանքի գործի դաշտին մէջ իր լաւագոյն տեղը ունենալու: Ծափեր:

Հրապարակային այս խոստումներն ու մասնաբաժինները իրենց ուսերուն վրայ առնող մասնաճիւղերու պատգամաւորները 14րդ այս հարցը իր բովանդակալից եւ կենսագործող ելոյթներով բաւ համարեցին և յատուկ պարտաւորութեան

տակ դրին յաջորդ Կ. Գ. մարմինը, որ իր ոյժերու ուժգին լարումով աշխատի միամեայ շրջանի ժամանակամիջոցով քէմփէյնը հասցնել իր բաղձալի տրամաբանական նպատակակէտին :

ՆՈՐ ԵԼ ԶԱՆԱԶԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ. — Առաջարկուեցաւ այդ օրուայ Համա-Քղեցիականի խնջոյքին Համար սարքել Հանդիսաւոր Թափօր Տիթրոյթի և Տիրպօրնի Հայկական Թաղամասերուն մէջ եւ ապա անցնիլ Հանդիսատեղին :

Այս առաջարկը ընդունուեցաւ ծափերով եւ թելադրուեցաւ բոլոր օթօ ունեցողներուն, պատգամաւոր կամ ոչ պատգամաւոր իրենց մասնակցութիւնը չի զլանան բերելու :

Առաջարկուեցաւ Համագումարի սեղանին բերել Քղի Քաղաքի Վերաշինացի Պետ. Գանձի ստացականը Ընկեր Մ. Շահինեան ցուցողքեց այդ Աւանդապահ-Թուղթը և ստեղծեց ուժգին խանդավառութիւն :

Համագումարը փակուեցաւ ժամը 12-ին, յաջորդ օրը, Բշ. առաւօտ ժամը 9-ին վերսկսելու որոշումով :

Ի Դիմաց Դիւանի

Նախագահ

Քարտուղար

Ա. ՆՈՐՍԻԿԵԱՆ

Ա. ԵՂԻԿԵԱՆ

ՆԻՍՏ Գ.

Այս նիստին կը նախագահէ ընկ. Արտաշէս Ասատուրեան :

Նիստը բացուեցաւ Բշ. առաւօտ ժամը 10-ին, նոյն հօլին մէջ, ներկայ էին 24 պատգամաւորներ, իսկ բացակայ պատգամաւորները բանաւոր պատճառներով կը բացակայէին :

Գործաւոր ընկերներու ձայները իրենց փափաքին Համաձայն փոխանցուեցան Հետեւեալ ընկերներուն. —

Ընկեր Գուրգէն Մարտիրոսի ձայնը ընկեր Սարգիս Սարոյեանին՝ իսկ ընկ. Զէվաէրեանի ձայնը ընկ. Մկրտիչ Գալաճեանին տրուեցաւ :

Հէրտիֆ գիւղի ներկայացուցիչներէն ընկ. Պորէն Օյնոյեանի ձայնը իր փափաքին Համաձայն փոխանցուեցաւ նոյն գիւղի միութեան անդամ ընկ. Մեսրոպ Գալայճեանին :

կարդացուեցաւ նախկին նիստի արձանագրութիւնը և նոյնութեամբ վաւերացուեցաւ :

ՄԻՋԱՆԿԵԱՒԱԿԱՆ ԶԱՐԾԵՐ . - Կ . Գ . մարմինը իր բարոյական գեկոյցի ընթերցման ատեն ձեռքի տակ չունէր հաշուական մասը , որ կը մնար Հաշուական Յանձնախումբի տրամադրութեան տակ : Այս նիստին իբր լրիւ գործ՝ Յանձ-նագրահար ընկ . Մ . Շամալեան դուրս եկան իրենց հաշիւներով և տեսնուեցաւ որ յանձնախումբը գտած է գործադիր մարմնի հաշիւները ուղիղ և անշոյշ՝ ուստի կը թելադրէր Համագումարին տալ իր միասնական գնահատանքը :

Համագումարը այս իրողութիւնը ընդգծելէ վերջ՝ տուաւ իր դրդագիրն ծափերը :

ՀԱՇՈՒԵԿՇԻՌԸ . -

ՄԱՆՈՒԹ . - Ելքի և մուտքի առանձին հաշիւները պիտի գտնէք յաջորդ էջերուն վրայ :

Ընկ . Մուշեղ Շամալեան գործի բերումով մեկնեցաւ և անոր ձայնը փոխանցուեցաւ ընկ . Սուրէն Սարգիսեանի :

ԺԲ . - ՆՈՐԸՆՏԻՐ Կ . Գ . ՄԱՐՄԵՆԻՆ ՕԺԱՆԴԱԿ ԽՈՐՀԸՐԴԱՏՈՒ ՄԱՐՄԵՆ ՄԸ ԲՈՂՈՐ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ . - Այս հարցը ունէր իր դրական և բացասական կողմերը , երկար վիճաբանութիւններէ վերջ , թեր ու դէմ կարծիքները ամենայն դէպս ունեցան իրենց լուսարձակները , Համագումարը այս լուսարձակներու թելադրանքէն մղուած , որոշեց , որ Կ . Գ . Մարմինը փոխան օժանդակ անդամներ նշանակելու , այլ իրաւունք կունենայ տուեալ հանգամանքներու հարկադրանքին տակ զանազան շրջաններու մէջ նշանակովի լիազօրել ընկերներ , որոշ ժամանակի համար՝ տանելու Կ . Գ . Մարմնի նախաձեռնեալ աշխատանքները :

Այս որոշումով հարցը վսիճանուեցաւ :

ԺԳ . - ԽՈՐՀԸՐԴԱՆՇԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ . - Համագումարի ընթացքին և անկէ առաջ Համաքղեցիականի իտէալը խորհրդանշող տրամադրութիւնները հասունացած վիճակով արտայայտուեցան այս հարցին շուրջ : Խորհրդանշանը ըլլա-

Լուվ մեր գործի առինքնող խորհուրդը, պատգամաւորները ստիպուած էին հին ֆրիի ոգեկոչումները նոր-ֆրիի իտէալ կեանքին հետ շաղել և երկուքով միասին յատկանշել մեր այսօրուայ և վաղուայ գործին Սիմպոլը-Պորհուրդը:

Ընդունուեցաւ մօտաւորապէս հետևեալ ձևը, որ յետոյ գեղարուեստադէտի վրձինին տակ պիտի ցուցնէ աւելի վառ գոյն, և աւելի հմայիչ դէմք՝ ողջ և մեռած իրականութեանց պատկերներով: Այստեղ կը դնենք ուրուագիծը այն Սիմպոլիին, որը համագումարէն սկզբունքով՝ բնդունուեցաւ բոլոր թելադրութիւնները և ցանկութիւնները լսելէ վերջ:

ԱՌԱՋԻՆ.— Նշել դէմ-դէմի Սբ. Լուս և Արարատ լեռները ձիւնագագաթ:

ԵՐԿՐՈՐԴ.— Կամար մը՝ որ երկու պատմական լեռները զիրար կը կամրջէ:

ԵՐՐՈՐԴ.— Սբ. Լուսի ստորոտը պատկերել շին-ֆրիի տարազով այր մը և կին մը, որոնցմէ աւրը լծկան եղներով արօրը կը ղեկավարէ, իսկ կինը մանգաղը մէկ ձեռքը՝ փունջ մը ցորենի հասկ միւս ձեռքը երկուսով միասին լրացուցիչ ձև կուտան հին-ֆրիի տնտեսութեանց:

ՉՈՐՐՈՐԴ.— Արարատի ստորոտը ՆՈՐ-Ֆրիին իր նոր տնտեսութիւններու յատկանիչերով սքուած իր սրահն կը կրէ նոյն գոյգը հետևեալ բացառութեամբ, այրը Պորհուրդային Հայաստանեան համապատասխան ասրապով թրաքտորին վրայ նստած Արարատեան դաշտը կակօսէ, իսկ կինը ճայրայի տաշև և նստած մտնածի գլիկները կ'սլորէ, այստեղ երկրագործութեան հետ զուգորդուեցաւ ճարտարարուեստը, ինչու որ Պ. Հայաստանի մէջ կեանքը այս հունով կ'ընթանայ:

Իսկ գեղարուեստական զանազան յաւելումները, որոնք կրնան այս խորհուրդին հմայքը աւելի կենդանի ներկայացնել՝ աւելցնելու է:

Պորհուրդանի փոփոխութեան հարցը այսպէս երբ իր տրամաբանական եզրին հասաւ, ծնունդ տուաւ նորանոր հասոյթաբեր աղբիւրներ:

ՕՐԻՆԱԿՆԵՐ -- Թելադրուեցաւ յաջորդ Կ. Գ Մարմնոյ  
Կազմին, որ նոր Քղթի Սիմպոլը պատրաստուած ժամանակ  
պէտք է նկատի ունենան առաջին պարագային Սիմպոլը խոշոր  
շինել, որպէսզի վաղուայ մեր օրացոյցերու զարդանշանը  
դառնայ, անկէ յետոյ ինկրէյվինկի միջոցաւ կրնայ միջակ և  
փոքր քթեր ունենալ իր տրամագրութեան տակ դործածելու  
դանազան տոթներով:

ԿՐԾՔԱՅԻՆ ՊԷՃԵՐ - Սիմպոլի ոգին հանուր Քղեցիներու  
ամենօրեայ իրապատկերը դարցնելու համար՝ ընդունուեցաւ  
շինել ԿՐԾՔԱՅԻՆ ՊԷՃԵՐ, իւրաքանչիւր Քղեցիի կուրծքը զար-  
դարելու:

ԳՐՔՈՅԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ -- Որոշուեցաւ, որ յա-  
ջորդ Կ. Գ. Մարմինը իր ժամանակաշրջանի անսուղ ժամերուն  
թօն տայ զրքոյկի մը հրատարակութեան սրու մէջ յօդուած-  
ներ ըլլան Հին - Քղթի սլազան կեանքէն: Այդ զրքոյկին կցել  
Ծրագիր - Կանոնադիրը, Անդրանիկ Համագումարի Արձանա-  
գրութիւնը, մասնաճիւղներու տարեկան աշխատանքները ամ-  
փոփ, և Կ. Գ. Մարմնոյ Ձեկուցադիրը իբր միամեայ տուրք  
Համաքղեցիականի սկզբնաւորման և շարժման:

ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄ-  
ԻՒ ՁԵԿՈՅՑ. - Այս յանձնախումբի ներկայացուցիչ ընկ. Բժ.  
Իգնատիոսեան զանազան յօդուածներու յաւելումներն սւ յա-  
պուումները պարզ ու մէկին ներկայացուց Համագումարին,  
որը բրաւ իր դիտողութիւնները փոփոխութեանց շուրջ ապա  
հաւանեց ու յանձնախումբի ընդգրկած հիմնունքներով ըն-  
դունիլ վերախոսուելիք կէտերը և թելադրել յաջորդ Կ. Գ.  
Մարմինը որ նոր Ծրագիր-Կանոնադիրը անմիջապէս տպագրու-  
թեան յանձնէ և ցրուէ մասնաճիւղերուն:

ԺՁ. - ԲՈՂՈՐ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ  
ՄԸ ՀԱՄԱՔՂԵՑԻԱԿԱՆԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ. - Հարցը ունէր  
իր յոյժ շահեկան կողմերը համագործակցական ըմբռնուսնե-  
րով: Կապ հաստատելով մէկ-մէկու հետ առիթ կստեղծուէր  
որ վաղուայ մեր կողմնակցական մարզերու մէջ մեր կապերը

և գօտիները աւելի ամբանան և պնդուին : Այս անդրադարձումներու ընթացքին խօսք տրուեցաւ Հօկ-ի ներկայացուցչին, որը դուրս եկաւ ըսելու որ այդ կարգի հեղինակութիւն միայն և միայն Հօկ-ին կը վայելէ և նա արդէն չորս ամիսէն աւելի կ'ընէ, որ այդ ուղղութեամբ աշխատանքներ կը թափէ համայն հայրենակցականներու լիազումար համագումարի մը գետին պատրաստելու՝ Ձեզ կը մնայ խթան ըլլալ Հօկ-ի Կ. Վարչութեան այդ համագումարը փութացնելու :

Այս բացատրութիւնները բաւական նկատուեցան Համագումարի կողմէն և առաջարկուեցաւ ու քուէարկուեցաւ հարցը վերջացած նկատել :

ԺԷ. — ՀԱՄԱ-ԲԱՐՁՐ-ՀԱՅՔԵԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ. — Այս հարցը նկատուեցաւ վաղուայ Կ. Պ. Մարմնի աշխատանքներու է՛ն կարևորն ու խարսխականը՝ նիւթական, բարոյական և հոգեկան ըմբռնումով : Սա իր համապարփակ էութեամբ իր մէջ մագնիսական զօրութեամբ կրնար քաշել ընդհանուր Բարձր-Հայքի և անոր փէշերը եզերող բոլոր այն աւաններն ու գիւղերը, որոնցմէ մաս մը թէ և կազմակերպուած բայց վըտիտ թիւ ունին՝ իսկ մաս մըն ալ անկազմակերպ և մեկուսացած՝ կրնան ուժանալ բոլորովին և անընդունակ տարր դառնալ, և որպէսզի այդ մեկուսացածներն ու կազմակերպուած փոքրաթիւ հայրենակցականները կարողանանք ընդհանուր գործին լծակիցներ դարձնել, պարտք է յանձնարարութիւն աւանդ թողուեցաւ յաջորդ Կ. Պ. Մարմնին, որ իր պաշտօնավարութեան տարեշրջանի ընթացքին, հնարաւորութիւն ստեղծէ քով-քովի բերել Բարձր-Հայքի միութիւնները, համա-Բարձր Հայքեան միահաղոյն գործի նախագիծ պատրաստելու հնարաւորութիւնը ստեղծէ. որով նպաստած կըլլայ Ս. Հայաստանի վերաշինական վերելքին մասնաւորապէս, իսկ ազգահաւաքման գերագոյն աշխատանքներուն ընդհանրապէս, որոնց համագործումով կարող կ'ըլլանք Ս. Հայաստանի մէջ հաւաքական տնտեսութիւններու աշխոյժ և մեծղի միաւորութեան մը նախատիպը ստեղծել գաղթաշխարհին մէջ :

Այս թէղիւն տրուեցաւ միաձայն թո՛ն և ծափահարուեցաւ դղրդագիւն կերպով:

Ժե. — ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆՈՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ. — Կ. Գ. Մարմնի թեկնածուներ նշանակելու յանձնախումբը Համաձայն Համադումարի ընթացիկ մէկ որոշման՝ թեկնածուներու երկուստիկ ցանկը ներկայացուց հետեւեալ ընկերներէ և ընկերուհիներէ .

Յարութիւն Պէրպէրեան 27, Սիսակ Նորատունկեան 24

Արսէն Մուշեղեան 23, Արտաշէս Ասատուրեան 7

Նազիկ Մուշեղեան 20, Արմէն Վարժապետեան 24

Վրթանէս Չէվտէրեան 17, Գրիգոր Աւագեան 24

Յարութիւն Ժամկոչեան 11, Սարգիս Սարոյեան 6

Գրիգոր Մարտիրոսեան 8, Յակոբ Թորոյեան 6

Ռուբէն Շահինեան 13, Ղազար Մեծիկեան 12

Ա. Յրստիսեան 11, Մ. Խոշոյեան 5

Մամբրէ Ամիրխանեան 2, Արտաշէս Գրիգորեան 2

Խորէն Օյնոյեան 1, Լեւոն Մկրտիչեան 3

Խասմարդ Մուրատեան 21, Մուշեղ Շամալեան 23

Գաղտնի քուէարկութեան այս արդիւնքէն մեր հետեւեալ ընկերներն ու ընկերուհիները եղան նորընտիր Կ. Գ. մարմնի անդամներ:

Յ. ՊէրՊէրեան

Ս. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

Ա. ՄՈՒՇԵՂԵԱՆ

Ն. ՄՈՒՇԵՂԵԱՆ

Ա. ՎԱՐՃԱՊԵՏԵԱՆ

Վ. ՉԷՎՏԷՐԵԱՆ

Գ. ԱՒԱԳԵԱՆ

Ռ. ՇԱՀԻՆԵԱՆ

Ղ. ՄԵՇԻԿԵԱՆ

Խ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Մ. ՇԱՄԱԼԵԱՆ

Համադումարը դղրտագիւն ծափերով ողջունեց Համա-

Քղեցիականի նորընտիր կեդրոնական Գործադիր Մարմինը :

Փակման խօսքեր ըսելէ առաջ՝ պատգամաւորներէն Հարց բերուեցաւ Համագումարի ընդհանրական աշխատանքները մամուլին նիւթ ընծայելու համար ընտրել մէկը, որ տանի այդ գործը : Առաջարկուեցաւ եւ միաձայնօրէն ընտրուեցաւ ընկեր Ա. Եղիկեան այդ աշխատանքին համար :

ՓԱԿՄԱՆ ԽՐԱԽՈՒՍԻԶ ԽՕՍՔԵՐ. — Իրենց լաւագոյն խրատուականները տուին ընկերներ՝ Յարութ. Պէրպէրեան, ԲԺ. Ա. Իգնատիոսեան, Գ. Գանձանակեան, և Դիւանի կողմէ Ա. Եղիկեան :

Համագումարը փակուելէ առաջ յայտարարուեցաւ նախորդ Կ. Գործ. Մարմինէն, որ ի պատիւ պատգամաւորներուն նոյն երեկոյ հացկերոյթ պիտի տրուէր ընկեր Ա. Վարժապետեանի ՊիՐ ԿԱՐՏԸՆԻՆ մէջ :

Համագումարը փակուեցաւ անխառն եւ բիւրեղ տրամագրութեան տակ : Վաղուայ աշխատանքներու պատկերը խրճուած էր բոլոր պատգամաւորներու մտքին մէջ և իւրաքանչիւր պատգամաւոր իր կարելին ընելու խոստումով կը բաժնուէր Համա-Քղեցիականի Անդրանիկ Համագումարէն, որը վաղուայ նոր Քղիի նոր տնտեսութիւններու թեւակոխումներուն անգերազանցելի նախատիպը պիտի նկատուի յետագայ հաւաքական տնտեսութեանց կենսագործումներու լոյսին տակ :

Համագումարը փակուեցաւ կեցցէններու եւ հուռուաներու տակ :

Կեցցէ՛ Համագումարը :

Կեցցէ՛ն անկէ բղխած յառաջադրութիւնները :

Կեցցէ նոր Քղին :

Կեցցէ Խ. ՀԱՅԱՍՏԱՆԸ :

Ի դիմաց դիւանի՝

Նախագահ

Քարտուղար

Ա. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Ա. ԵՂԻԿԵԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍՏ

Նորընտիր Կ. Գ. Մարմինը Սրտակարգ նիստի հրահարե-

լոյլ բոլոր պատգամաւորները, Յուլիս 5-ին, Հօկ-ի Թուաման-  
եան Ակումբին երկրորդ յարկը, ուր ընտրուեցաւ նոր դիւան՝  
նախագահ՝ Բժ. Ա. Իգնատիոսեան, քարտուղար՝ Ա. Եղիկեան :  
Կարգացուեցաւ Գորդ նիստի արձանագրութիւնը և վաւերաց-  
ուեցաւ : Պատրաստուեցաւ նոյնպէս յառաջիկայ տարուայ  
ընթացիկ աշխատանքներուն նախագիծը :

Կ. Գ. Մարմնոյն աշխատանքները դիւրացնելու համար  
եղած խորհրդածութիւններն ու տրուած որոշումները մաս  
կազմելոյ Կ. Գ. Մարմնի ժողովներու արձանագրութեան՝  
մենք այստեղ կը նշենք հետեւեալ պարբերականը, որու տակ  
ստորագրեցին բոլոր պատգամաւորները :

« Համա-Քղեցիականի Անդրանիկ Համագումարին մաս-  
նակցող պատգամաւորներս մեր ստորագրութեամբ կը վա-  
ւերացնենք այս արձանագրութիւնը, որ ճշգրիտ պատկերն է  
մեր Համագումարին ելոյթներուն, ինչպէս և ուղիղ ճամբան  
մեր վաղուայ աշխատանքներուն »

Բժ. Ա. Իգնատիոսեան

Ա. Եղիկեան

ՆԱԶԻԿ ՄՈՒՇԵՂԵԱՆ

ՂԱԶԱՐ ՄԵՄԻԿԵԱՆ

ԱՐԱՄ ՆՈՐՍԻԿԵԱՆ

ՍԻՄԷՈՆ ԽԼԱԻԵԱՆ

ՍԻՍԱԿ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ՎՐԹԱՆԷՍ ՉԷՎՏԵՐԵԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՄՈՒՇԵՂ ՇԱՄԱԼԵԱՆ

ԽՈՐԷՆ ՀԱՂԱՃԵԱՆ

ՄԵՍՐՈՒՅ ՕՍԷԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Մ. ՄՈՍԿՈՅԵԱՆ

ԱՐՄԷՆ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԺԱՄԿՈՉԵԱՆ

ՍՈՂՈՄՈՆ ՕՎՈՅԵԱՆ

ՍՈՂՈՄՈՆ ՕՍԷԵԱՆ

ԵՍԹԵՐ ԵՂԻԿԵԱՆ

ԱՐՄԷՆ ՄՈՒՇԵՂԵԱՆ

ԱՐՏԱՇԷՍ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

ԽԱՍՎԱՐԴ ՄՈՒՐԱՏԵԱՆ

ՌՈՒԲԷՆ ՇԱՀԻՆԵԱՆ

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՐՏԻՐՈՍ

ՄԽԹԱՐ ՇԱՀԻՆԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ԱԻԱԳԵԱՆ


Ի Դիմաց Արտակարգ նիստի Դիւանի՝

Նախագահ

Քարտուղար

Բժ. Ա. Իգնատիոսեան

Ա. Եղիկեան



ԿԵՆՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԵՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԸՆԿ .

ԱՐՄԷՆ ՄՈՒՇԵՂԵԱՆԻ ԶԵԿՈՅԸ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Ընկերներ .—

Այսօր , մեր այս անդրանիկ Համագումարին ինձ վիճակուած է ներկայացնելու ժամանակաւոր կեդր . Գործադիր Մարմնի անցնող Ծամիւներու գործունէութեան ամփոփ պատկերը և Համագումարին մեր տուած արդուութիւնները :

Սակայն թոյլ տուէք ինձ ընկերներ , որ մեր գործունէութեան անցնելէ առաջ մի քանի խօսքով երեւան բերել այն ազդակները որ ծնունդ տուին Համա-Քղեցիական Միութեան :

Տարիներէ ի վեր փորձեր կ'ըլլային Համա-Քղեցիական միութիւն մը կազմելու , սակայն այդ փորձերը դրական արդիւնք չէին ստանար հակառակ այն իրողութեան , որ այսօրուան ղեկավար գործօնները կային ու կը գործէին : Փորձերը դրական արդիւնք չէին ստանար որովհետեւ Քղեցի աշխատաւոր մասսաները գիտակցական մերձեցում չունէին միութեան ծնունդ տուող ազդակներու հետ :

Որոնք էին այն ազդակները , որոնց հետ , Քղեցի աշխատաւոր զանգուածները գիտակցական մերձեցումը չունէին :

Առաջին .— Քղեցի աշխատաւորութիւնը անգիտակ էր , որ Խ . Հայաստանի աշխատաւորութեան պայմաններու բարելաւման համար ստեղծուած են հիմնական բոլոր նախադրեալ ազդակները :

Երկրորդ .— Քղեցի աշխատաւորութիւնը անգիտակ էր որ Խ . Հայաստան միակ վայրն է , ուր հայ աշխատաւորութիւնը շնորհիւ ստեղծուած դրութեան ձերբազատուած է որեւէ տեսակի շահագործումէ :

Երրորդ .— Քղեցի աշխատաւորութիւնը անգիտակ էր , որ հայրենի ծննդավայրի յիշատակը անմահացնող միակ պատմական Աքաբ պիտի լինի Խ . Հայաստանի մէջ նոր Քղի աւանի մը կառուցումը :

Չորրորդ .— Քղեցի աշխատաւոր զանգուածը անգիտակ էր

որ Խ. Հայաստանը կոչուած է լինելու հայ աշխատաւորութեան վերջին հանգրուանը :

Հինգերորդ -- Վերջապէս Քղեցի աշխատաւոր դանդուածը անդիտակ էր, որ Խ. Հայաստան հանդամանօրէն իր Հայրենիքն է :

Սակայն ընկերներ, շնորհիւ Խ. Հայաստանի հետ կապուած երեւոյթներու զարգացման ու ծաւալման, Քղեցի աշխատաւորութիւնը կրցաւ տեսնել ու գիտակցիլ այդ ազդեակներուն :

Թուենք այժմ այդ լուսաչող երեւոյթները, որ Քղեցի աշխատաւոր դանդուածը առաջնորդեցին տեսնելու ճշմարիտ իրականութիւնը :

Առաջին -- Խ. Հայաստանի կազմակերպած տասնեակ հողարաւոր դադթականներու ներգաղթը դէպի Խ. Հայաստան :

Երկրորդ -- Հայրենակցական միութիւններու Խ. Հայաստանի մէջ կառուցած աւանները :

Երրորդ -- Խ. Հայաստանի Տնտեսական, կուլտուրական և ճարտարարուեստական զարգացման ու առաջդիմութեան հանդամանքը :

Չորրորդ -- Խ. Հայաստանի և արտասահմանի հայ աշխատաւորութեան միոխադարձ յարաբերութեանց կապերու տրացսումը, շնորհիւ Խ. Հայաստանի բարեկամ այլ օրկաններու :

Ընկերներ, այս երեւոյթները կուգային զուգադիպելու տնտես տարած միջավայրի բոլորովին հակադրող երեւոյթներու :

Անդործութիւն, Պանդաներու սնանկութիւն, կալուածներու բռնագրաւում, վերջապէս աշխատաւոր մասսաներու ծայր աստիճան թշուառութիւն, երթալով աւելի սաստկացած ու անսահման չափերու հասած էր :

Այս երեւոյթները հանդամանօրէն տեսաւ Քղեցի աշխատաւորութիւնը և չէր կրնար չի գիտակցիլ

դէպի նոր Քղի աւանի կառուցման անհրաժէշտ նախադրեալը՝  
 Համա-Քղեցիական միութեան կազմութեան աշխատանքը :

Ինքնագիտակցութեաւ լոյսով առաջնորդուած Տիթրոյ-  
 թի Քղեցի աշխատաւորները 1933 Սեպտեմբեր 26-ին հիմը  
 դրին Համա-Քղեցիական միութեան, եւ առաջադրեցին կա-  
 ռուցանել ճնոր Քղին Խ. Հայաստանի մէջ ։

Սեպտ. 26-ի առաջին խորհրդակցական ժողովին ուր  
 ներկայ էին աւելի քան հարիւր հայրենակիցներ ընտրեցին  
 ժամանակաւոր կեդր. Գործ. Մարմին և անոր տուին մինչեւ  
 Համագումարը գործելու իրաւասութիւն ։

Անցնինք այժմ ժամանակաւոր կեդրոնական Գործադիր  
 Մարմնի գործունէութեան, ներկայացնենք անոր դրական և  
 բացասական կողմերը եւ զանոնք արձանագրենք այս Համա-  
 գումարին իբրեւ կատարուած իրողութիւններ մեր կազմա-  
 կերպութեան գործունէութեան առաջին շրջանին ։

Ընկերներ, որպէսզի Համա-Քղեցիական միութիւնը ըլ-  
 լայ մասսայական կազմակերպութիւն մը, և նոր Քղի աւանի  
 գործը դառնար իրականութիւն անհրաժէշտ էր սխիւժեմաթիւք  
 աշխատանք ։ Առաջնորդուելով այս տեսակետէն ժամանակա-  
 ւոր կեդրոնական Գործադիր Մարմինը իր առաջին լիակատար  
 նիստին մէջ վարչական բաժանմունքները ճշդել ու վաւերա-  
 ցընելէ յետոյ, անցաւ հիմնական աշխատանքներու դասա-  
 ւորման ։ Այնուհետեւ որոշեց հերթական կերպով անցնիլ  
 անոնց գործադրման ։

### ՄԱՄՈՒԼԻ ՄԷՋ ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ԿՈՉԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Կեդրոնական Գործադիր Մարմինը իր առաջին գործը  
 նկատեց մամուլի միջոցաւ յայտարարելու միութեանս հիմ-  
 նադրման պարագան, ապա հրաւիրելու Քղեցի հայրենակից-  
 ները, որ համախմբուին միութեանս շուրջ և զայն դարձնեն  
 մասսայական կազմակերպութիւն ։

Հոկա. 6-ին խմբագրուեցաւ այս կոչը եւ ուղարկուե-

ցաւ Ամերիկահայ թերթերուն հրատարակութեան համար :  
Կոչք հրատարակուեցաւ «Բանուոր»ի և «Պայքար»ի մէջ անմի-  
ջապէս , մէկ ամիս վերջը «Հայրենիք»ի և քիչ աւելի ուշ  
արտատպուած էր Բարիդ հրատարակուող «Հօկ» ամսագրի մէջ :

#### ԿԱԶՄԱԿԱՅՆ ԾՐԱԳԻՐ-ԿԱՌՆԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Մեր երկրորդ դործը եղաւ Ծրագիր-Կանոնագրի մշա-  
կումը : Առանց Ծրագիր-Կանոնագրի ցուցմունքներու դժուար  
պիտի ըլլար ուղիղ առաջնորդութիւն տալու կազմակեր-  
պական աշխատանքներուն :

Մեր պատրաստած ծրագիր - կանոնագիրը իր բովան-  
դակութեամբ պիտի համապատասխանէր միութեանս նպա-  
տակի իրականացման գործին՝ սկզբունքով : Այս հիմնական  
տեսակէտէն առաջնորդուած Բարտուղարութեան կողմէ պատ-  
րաստուած էր 14 յօդուածներէ բաղկացած ծրագիր-կանոնա-  
գիր մը , որը մեր երկրորդ լիակատար նիստի մէջ վաւերաց-  
ուելէ յետոյ , որոշուեցաւ 1000 տպագրեալ օրինակներ պատ-  
րաստել տալ , 10 սէնթ գին նշանակելով և ուղարկելով մաս-  
նաճիւղերու սպառելու համար :

#### ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՇԽՅՏԱՆՔ

Մեր գործունէութեան գլխաւոր և դժուարին մասը  
կը կազմէր մասնաճիւղեր կազմակերպելու աշխատանքը :

Առանց մասնաճիւղերու թուի բազմացման անհնարին  
պիտի ըլլար , բոլոր Քղեցիները համախմբելու Համա-Քղեցի-  
ականի շուրջ և անոնց օժանդակութիւնն ու աջակցութիւնը  
ապահովելու նոր Քղի աւանի կառուցման գործին :

Մասնաճիւղեր կազմելու համար , մեր միակ միջոցներն  
են շրջաբերական նամակներ գրել զանազան քաղաքներ , տե-  
ղական սւժերու նախաձեռնութիւնը ապահովելու համար :  
Յովորդարար երեք շրջաբերական նամակներ ղրկուեցան Քա-  
նատայի և Միացեալ Նահանգներու 30 է աւելի քաղաքներ 110  
անհատներու : Բացի պաշտօնական հաղորդագրութիւններէն ,  
եղած են նաև անհատական թղթակցութիւններ զանազան ըն-  
կերներու հետ , իրենց օժանդակութիւնը բերելու , իրենց

բնակած քաղաքներու մէջ մասնաճիւղեր կազմելու համար :

Իսկ Մարտ 9 ին մեր հինգերորդ լիակատար նիստը անդրարդառնալով անցնող հինգ ամսուան ձեռք բերուած նուաճումներուն, որոշեց՝ կրկնակի աշխատանք կատարել հետեւեալ քաղաքներու մէջ մասնաճիւղեր կազմելու : Սէնթ Լուիզ, Ի․ Սէնթ Լուիզ, Տիրպօրն, Հայլընտ Փարք, Թրոյ Նիւ-Եօրք և կարգ մը այլ քաղաքներ ուր համեմատականօրէն աւելի շատ ֆղեցիներ կը բնակին :

Նոր մասնաճիւղեր կազմելու յաջողութիւնը ապահովելու կարևոր խթան մը ստեղծելու համար, որոշուեցաւ նաև մեր ձեռք բերած յաջողութիւնները, կոչ զեկոյցով և մամուլով հրապարակել :

Վերոյիշեալ կոչ-զեկոյցը շրջաբերական նամակի ձևով ղեկուցուեցաւ մեր մասնաճիւղերուն, ապա հրատարակուեցաւ «Բանուորի Մայիս 17—18 Թիւերու մէջ, իսկ Մայիս 19 ին «Բանուոր»ը իր ամբողջ խմբագրականը յատկացուցած էր այս առթիւ :

Մեր կատարած աշխատանքներուն իբրև արդիւնք մասնաճիւղեր կազմուեցան հետեւեալ քաղաքներուն մէջ, Տիթթօրթ, Սէնթ Քաթէրինս, Վայթնսվիլ, Շիքակօ, Սէնթ Լուիզ, Տիրպօրն, Հայլընտ Փարք և Կրանիթ Սիթի : Ուրեմն 9 ամսուան մէջ կազմուած էր 8 մասնաճիւղեր :

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐՈՒ ՀԵՏ ՄԵՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ

ԱՆՈՆՑ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Ընկերներ, մասնաճիւղերու հետ մեր յարաբերական կապը եզեր է կանոնաւոր, յաճախ տրուած են հրահանգներ ու ցուցմուքներ շրջաբերականներով և թէ մասնաւոր նամակներով :

Մասնաճիւղերը կրցին յայտնաբերել կազմակերպական որոշ աշխատանք : Տիթթօրթի մասնաճիւղը ունեցաւ հրապարակային երեք ձեռնարկներ, 550 աօլար զուտ շահ մը ապահովելով մեր կազմակերպութեան :

Ուսայթնսվիլի մասնաճիւղը երկու ձեռնարկներ, ապա-

Հովելյով 150 տօլարի զուտ շահ մը : Տիրպօրնի մասնաճիւղը մէկ հրատարակային հանդէս-խնջոյք , ունենալով 110 տօլարի զուտ հասոյթ : Շիկակոյի մասնաճիւղը՝ երկու ձեռնարկներ-թէէ հասոյթը մեղ յայտնի չէ տակաւին , սակայն ստացուած տեղեկութիւններու համաձայն արդիւնքը քաջալերական կը նկատուի : Սէնթ Լուիզի մասնաճիւղը , մեր երկրորդ միջնա-բերդը ունեցաւ մէկ պարահանդէս որուն զուտ հասոյթը կը նկատուի \$419.00 տօլար :

Այս ձեռք բերուած նիւթական արդիւնքները գործնա-կան ապացոյց են , որ մասնաճիւղերու մէջ տրամադրութիւն-ները շատ բարձր են հանդէպ մեր միութեան առաջադրած նպատակի եւ թէ գործունէութեան : Քաջալերուած մասնա-ճիւղերու ձեռք բերած նուաճումներէն , մենք փութացուցինք համագումարի գումարումը , վստահ ըլլալով որ աւելի մեծ խանդավառութիւն պիտի ստեղծուի Քղեցի աշխատաւոր զան-գուածներու մէջ , Համագումարի գումարման երեւոյթով :

**ՄԵՐ ՅԱՐԱՐԵՐԱԿԱՆ ԿԱՊԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՄԱՐՍԷԼԻԱՅԻ ՔՂԻ ԼՍՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՎԵՐԱՇԻՆՍԾ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԵՏ**

Այս միութեան մասին վաղուց մենք իմացաց էինք և գիտէինք , որ մեր առաջադրած նպատակի իրականացման կը ձգտի : Հետեւաբար մենք որեւէ արգելիչ պատճառ մը չէինք դանկր այս երկու ճիւղերու միացման : Այս պատճառաւ ալ մեր միութիւնը հիմնելէն կարճ ժամանակ մը վերջը ա-նոնց հետ յարաբերութեան մէջ մտանք , մինչեւ որ անոնք վերջնականապէս ենթարկուեցան Ամերիկայի Կեդրոնական Գործադիր Մարմնի հեղինակութեան : Այսօր , անոնք այս Հա-մագումարին զրկած էին իրենց գործունէութեան հաշուե-տուութիւնը և ունին իրենց նշանակովի պատգամաւորները :

Ընկերներ , Ֆրանսայի մէջ մենք այժմ ունինք երկու մասնաճիւղեր մին Մարսէլ քաղաքին մէջ , միւսը Մարսէլի մէկ արուարձանի մէջ :

Մեր այս մասնաճիւղերը հակառակ իրենց սահմանա-փակ միջոցներուն արդէն կանուխէն գործնական քայլ առած են , 3000 Ֆրանք յանձնելով Երեւանի Հօկ-ի գլխաւոր վար-

չութեան նոր - ֆղի աւանի կառուցման ի հաշիւ և կը խոստանան յետագային առաջադրուած որեւէ քէմիէյնին աւելի լայն չափով բերել իրենց մասնակցութիւնը :

Ուրեմն մեր այս երկու մասնաճիւղերու աւելումով, մենք կունենանք տասը գործօն մասնաճիւղեր, որոնց միասնական ցանքերով պիտի կատարենք նորանոր նուաճումներ նոր-ֆղի աւանի կառուցումը փութացնելու ի խնդիր :

ՄԵՐ ԴԻՐՔՆ ՈՒ ՎԵՐԱԲԵՐՈՒՄԸ ՀԱՆԴԵՊ

ԳԻՒՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

Ընկերներ, աւելի քան 15 գիւղական միութիւններ կան որոնք ունեցեր են ուրոյն նպատակներ անցեալին մէջ և կատարած են օգտակար աշխատանք երբ տակաւին երկիր կար, սակայն այսօր անոնք կազմակերպականօրէն քայքայուած են եւ միայն փաստօրէն կը ճանչցուին իբրեւ միութիւն, եւ իրենց անուկով որոշ գումարներ պահ դրուած են Վանատայի և Միացեալ Նահանգներու մէջ : Այս միութիւններու կարգին բացառութիւն պէտք է նկատել Չանագշի գիւղի և Քաղաքի վերաշինաց միութիւնները, որ իրենց պատրաստի գումարները փոխադրած են Խ. Հայաստան, նոր ֆղի շինարարութեան՝ ի սպաս :

Սակայն ընկերներ, այնու ամենայնիւ այս կազմակերպութիւնները կարող են մեր սկսած գործին օգտակար ըլլալ, մասնաւորապէս իրենց պատրաստի գումարները յատկացնելով նոր ֆղի աւանի կառուցման :

Այս բոլորին գիտակցելով հանդերձ, կեդրոնական Գործադիր Մարմինը իր առաջի լիակատար նիստով որոշեց, գիւղական միութիւններու հանդէպ մնալ վերապահ, և պաշտօնական որեւէ քայլ թողուլ մեր Անդրանիկ Համագումարին, ուր հրաւիրուած էին գիւղական միութիւններու ներկայացուցիչները իրենց հանդիսաւոր խօսքը ըսելու համար :

ԱԿԱՄԱՅ ԸՆԴՀԱՏՈՒՄ ՄԸ

Ընկերներ, Դեկտ. 24, 1933-ին Նիւ Եօրքի մէջ տեղի ունեցաւ Ղեւոնդ Արքեպիսկոպոս Դուրեանի սպանութեան

դէպքը: Այս դէպքը թէև որեւէ կապակցութիւններ չունէր մեր կազմակերպութեան հետ, սակայն իր ընդհանրական բնոյթով, ան իր ազդեցութիւնը տարածեր էր հասարակական բոլոր կազմակերպութիւններու վրայ: Բնականաբար մեր կազմակերպութիւնը աւելի շատ պիտի ազդուէր, քանի որ ան տակաւին նոր կազմուած էր, առանց այդ ալ պէտք ունէր մեր բոլոր ֆղեցի հայրենակիցներու հաւաքական ուժերու համագործակցութեան:

Ուստի տրամաբանական էր ընդունիլ, որ այս դէպքի հետեւանքով ժամանակաւորապէս պիտի դանդաղէր մեր գործունէութեան թափը մինչև որ ժողովրդական յուզումը մեղմանար եւ կիրքերը խաղաղէին:

Մեր չորրորդ լիակատար նիստը նկատի ունենալով առաջացած խռովայոյզ երեւոյթները, որոշեց ժամանակաւորապէս մասնաճիւղեր կազմակերպելու հրապարակային աշխատանքները դադրեցնել: Այս ակամայ ընդհատումը տեւեց մինչև մեր հինգերորդ լիակատար նիստը, Մարտ 9, 1934:

### ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Ընկերներ, որքան, որ ժամանակաւոր կեդրոնական Գործադիր Մարմինը ինքն իրեն թոյլ տուած էր կազմակերպական ամէն աշխատանք կատարելու, այդու ամենայնիւ անգիտակ էր, որ միութեանս նպատակի իրականացման գըլխաւոր խնդիրներու նկատմամբ վերջին խօսքը կը վերաբերի Համագումարին: Հետեւելով կազմակերպական այս կարգապահութեան, քննելով և ստուգելով ձեռք բերուած տուեալներն ու նուաճումները, ապա նկատի ունենալով Համագումարի գումարման ստիպողական պահանջները, Գործադիր Մարմինը, որոշեց Համագումարը գումարել Յունիս 30, Յուլիս 1 և 2-ին: Ինչպէս գիտէք այս որոշումը իր ժամանակին շրջաբերականով մը հաղորդուեցաւ մասնաճիւղերուն եւ «Բանւոյ» մէջ հրատարակուեցաւ ի գիտութիւն բոլոր ֆղեցիներուն:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԳԼԽԱՒՈՐ ՀԱՐՑԵՐԸ ԵՒ ՄԵՐ  
ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ընկերներ, այժմ մենք Համագումարի աշխատանքներու մէջ ենք: Մեր առաջ դրուած են կարգ մը յոյժ կարեւոր հարցեր, որոնց դրական լուծումը՝ անհրաժեշտ է, աւանի կառուցման գործը փութացնելու և մեր կազմակերպութիւնը աւելի մասսայականացնելու տեսակէտէն:

Համագումարի գլխաւոր հարցերէն՝ առաջինը, 10.000 տօլարի քէմփէյնն է: Այս քէմփէյնի յաջողութիւնը, հնարաւորութիւն պիտի տայ մեզ, որ լաւագոյն նախընթացով մը անմիջապէս անցնինք աւանի կառուցման աշխատանքին:

Տասը հազար տօլար, դիւրութեամբ կարելի է գոյացրնել եթէ մեր ընկերները Համապատասխան աշխատանք կատարեն, Պ. Հայաստանի բարեկամ բոլոր Քղեցի Հայրենակիցներու մասնակցութիւնը ապահովելու համար:

Երկրորդ գլխաւոր հարցը՝ գիւղական միութիւններու օժանդակութեան ապահովումն է: Ինչպէս ըսինք այս միութիւնները գործնականօրէն դոյութիւն չունին, սակայն անոնք տակաւին իրենց անուններով որոշ գումարներ պահ դրած ունին զանազան պանգաներու մէջ, որոնք կրնան յատկացուիլ նոր Քղի աւանի կառուցման:

Գիւղական միութիւնները խորապէս հասկնալու են, որ իրենց դրամները ասկից աւելի լաւագոյն և գեղեցիկ նպատակի մը չէին կրնար յատկացնել: Իրենք, իրրև մասնիկներ ամբողջ Քղեցիական հաւաքականութեան պէտք է, որ ինքնակամօրէն իրենց մասնակցութիւնը բերեն ընդհանրական այս մեծ գործին:

Երրորդ գլխաւոր հարցը, Պ. Հայաստանի կառավարութեան հետ բանակցիլ աւանի վայրի ճշգրտան համար:

Ընկերներ, այս գործը ևս ստիպողական և անյետաձգելի է. որքան շուտ աւանի վայրը ճշտուի և կառուցման աշխատանքներու սկսին, այնքան աւելի շատ պիտի վարկաւորի մեր կազմակերպութիւնը և ժողովրդական համակրութիւնը պիտի

դառնայ գործնական :

Ընկերներ , ամփոփելով մեր զեկոյցը կ'ունենանք հետեւեալ եզրակացութիւնները :

Ա. -- Որ՝ Համա-Քղեցիական Միութիւնը Քղեցի աշխատաւոր մասսայի մեծամասնութեան՝ Խ. Հայաստանի Հանդէպ ունեցած բարեկամական զգացումներու գործնական արտայատութիւնն է :

Բ. -- Որ՝ Համա-Քղեցիական Միութիւնը Քղեցի աշխատաւոր մասսայի մեծամասնութեան զգացումներու արտայատիչն է . և այդու բոլոր Քղեցիները կազմակերպող օրկանն է :

Գ. -- Որ՝ Համա-Քղեցիական Միութիւնը կազմակերպչական շրջանէն անցեր և մտեր է գործնական աշխատանքի շըրջանը :

Դ. -- Որ՝ մասնաճիւղերու կատարած աշխատանքները նկատել գոհացուցիչ և զանոնք գնահատել իրենց ձեռք բերած նուաճումներուն համար :

Ե. -- Որ՝ քնդունիլ 10,000 տօլարի քէմփէյնի մէկ տարուան մէջ գոյացնելու առաջադրութիւնը , իբրեւ անհրաժեշտ նախապայման աւանի կառուցման գործի փութացման համար :

Զ. -- Որ՝ բարեկամականօրէն մօտենալու է գիւղական միութիւններու ապահովելու համար անոնց նիւթական աջակցութիւնը մեր առաջտիրեալ նպատակի իրականացման համար :

Է. -- Որ՝ անհրաժեշտ է , շուտով բանակցութեան մտնել Խ. Հայաստանի կառավարութեան հետ «Նոր-Քղի» աւանի վայրի ճշգրտան համար :

Ընկերներ , վերջացնելով մեր զեկոյցը կը յուսանք , որ Համագումարը , իր լաւագոյնը պիտի ընէ , առաջադրած բոլոր հարցերու նկատմամբ : Ուրեմն կը մաղթենք լաւագոյն և արգիւնաւոր յաջողութիւն :



ԳՈՐԾԱԳԻՐ ՄԱՐՄԵՆԻ 9 ԱՄՍՈՒԱՆ ՆԻՒՔԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՈՒՅՏՈՒՈՒԹԻՒՆԸ  
(Սեպտեմբեր 26, 1933—Յուլիս 3, 1934)

ՄՈՒՏՔ		ԵԼՔ	
Տիբրոյթի Մասնածիւղ	\$155.55	Մրազիք—Կանոնագրի տպագրութեան	\$14.00
Անդամատուրք, Մուտք	396.45	Գ. Մարմնի կնիք	4.00
Չեռնարկներէ		Գ. Մարմնի նամակագլուխ	5.00
Վաթնովի Մասնածիւղ	25.00	Մասնածիւղերու	10.00
Անդամատուրք, Մուտք	54.00	Շրջաբերականներու տպագրութեան	18.75
Չեռնարկներէ		Փօսթ և նամակագրօջմի	11.98
Տիրութեան Մասնածիւղ	10.00	Հաշուապ. թուղթերու տպագրութեան	27.00
Անդամատուրք, Մուտք	100.00	Մէկ Հաշուեաների կողմ	2.00
Չեռնարկներէ		Մամուլի կոչ-Մանուցումի	35.31
Սէնթ Լուիզի Մասնածիւղ	77.00	Պատգ. ժողովի Մրահի վարձք	10.00
Անդամատուրք, Մուտք	100.00	Պատգամաւորներու ի պատիւ	
Չեռնարկներէ		Հացկերոյթի Մահս	28.27
Տիբրոյթի Մասնածիւղ	20.00	Չանաղան Մահսեր	2.15
Անդամատուրք, Մուտք	32.00	Նամակագրօջմի	75
Չեռնարկներէ			
Սէնթ Քաթէրինսի Մասնածիւղ	15.00	Ընդհանուր Գումար	169.16
Անդամատուրք, Մուտք	5.00		
Մրազիք-Կանոնագրէ		Հաւատարակչութեան	
Կիւլէսէրեանի մահուան ծաղկեպսակի առթիւ	6.00		
Պատգ. ժող. Գաշտահանդէս	278.00		
		Ընդհանուր Գումար	\$1272.00
		Չուտ Հատոյթ Պանգան	\$1102.84



ՇՐՋԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՄԱ-ՔՂԵՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ



ՀԻՄՆՈՒԱԾ՝


1933-Ի ՍԵՊՏԵՄԲԵՐ 26-ԻՆ



Վերամշակուած՝ 1934, Յուլիս 2-ին

ՏԻԹՐԱՅԻԹ, ՄԻՇ.





**Մ Բ Ա Պ Ի Բ - Կ Ա Ն Ո Ն Ա Պ Ի Բ  
Հ Ա Մ Ա Ք Ղ Ե Ց Ի Ա Կ Ա Ն Մ Ի Ո Ւ Յ Ե Ա Ն**

**Յ Օ Դ Ո Ւ Ա Մ Ա .**

**Ա Ս Ո Ա Ն**

Միուլթեանս անուկն է «Համա-Քղեցիական միուլթիւն»,  
Հաստատուած Սեպտեմբեր 26, 1933-ին :

**Յ Օ Դ Ո Ւ Ա Մ Բ .**

**Միուլթեանս նպատակը**

Միուլթեանս նպատակն է ի՞նչ Հայաստանի մէջ Հիմնել  
«Նոր Քղի» աւան մը, և Հնարաւորութիւն ստեղծել արտասահ-  
մանի բոլոր Քղեցիները հոն փոխադրելու :

**Յ Օ Դ Ո Ւ Ա Մ Գ .**

**Միուլթեանս Խորհրդանիւր**

1.- Բոլորաձեւ պատկերել դէմ—դէմի Սբ. Լուս եւ  
Արարատ լեռներու ձիւնադազաթները :

2.- Կամար մը՝ որ երկու պատմական լեռները զիրար  
կը կամրջէ : «Հինէն դէպի նոր կեանք»ը վերտառութեամբ :  
Իսկ կեդրոնը, անուկը «Համա-Քղեցիական միուլթիւն» :

3.- Սբ. Լուսի ստորոտը պատկերել Հին-Քղիի տարազով  
այր մը և կին մը, որոնցմէ այրը լծկան եղներով արօրը կը  
ղեկավարէ, իսկ կինը ճախարակ կը մանէ :

4.- Արարատի ստորոտը ՆՈՐ-ՔՂԻՆ իր նոր գիւղատն-  
տեսութիւնը յատկանշող մարդ մը՝ թրաքտորին վրայ նստած  
կը վարէ արտը : Նաև նորակառոյց գործարաններ՝ նոր ար-  
դիւնարերութիւնը խորհրդանշող :

5.- Վարի կողմը գրուած «Շինենք Նոր Քղին ի՞նչ Հայաս-  
տանի մէջ» նշանաբանը :

**Յ Օ Դ Ո Ւ Ա Մ Դ .**

**Միուլթեանս Հասարակական Գիրքը**

Միուլթիւնս Հիմնուած ԸԼԼՄԸՎ վերաշինական գետնի  
վրայ, այդու իր դիւքը բարեկամական է բոլոր այն վերա-  
շինական միութիւններու հանդէպ որ կը ձգտին օժանդակելու  
ի՞նչ Հայաստանի վերաշինական վերելքին : Միուլթիւնս չունի

որեւէ կուսակցական հակամիտութիւն, հետեւաբար չի հետապընդեր և չի ընդունիր որեւէ կուսակցական ազդեցութիւն:

### ՅՕԴՈՒԱԾ Ե.

#### Միութեան կազմական հիմունքը

Միութիւնն կազմուած է անդամական անկախ հիմունքով, այսինքն որեւէ Բղեցի կարող է միութեանն անդամակցիլ անկախ իր գիւղական միութեան անդամակցութեան կամ ոչ անդամակցութեան հանգամանքէն:

### ՅՕԴՈՒԱԾ Զ.

#### Անդամակցութեան Պայմանները

1.- Ամէն Բղեցի և ոչ Բղեցի անհատ, առանց սեռի, դասանանքի եւ կուսակցական խտրութեան կրնայ անդամակցիլ միութեանն եթէ կ'ընդունի միութեանն նպատակը եւ կ'ենթարկուի կանոնադրի տրամադրութեանց:

2.- Իրաւասու անդամ կը նկատուին 18 տարեկանէն վեր եղողները: 18 Տարեկանէն վար եղողները կրնան անդամակցիլ, բայց չեն կրնար ընտրել եւ ընտրուիլ:

3.- Իւրաքանչիւր այր պարտաւոր է վճարելու մէկ կամ աւելի տօլար մուտք և 25 սէնթ ամսատուրք:

Իսկ իւրաքանչիւր կին պարտաւոր է վճարելու 50 սէնթ մուտք և 10 սէնթ ամսատուրք:

4.- Անդամ մը արձանագրուած օրէն ընտրել և ընտրուիլ իրաւունք ունի:

5.- Որեւէ անդամ մասնաճիւղէ մը ուրիշ մասնաճիւղ փոխադրուելու համար, պէտք է իր կանխաւ պատկանած մասնաճիւղի հաւանութիւնն ու վկայագիրը ստանայ:

6.- Անդամ մը կը դադրի անդամակցութենէ վեց ամիս անդամատուրք չ'վճարելու պարագային:

7.- Որեւէ անդամ երբ դիտակցաբար դէմ կ'երթայ միութեանն շահերուն և կ'անտեսէ կանոնադրային տրամադրութիւնները կարտաքսուի միութենէն իր պատկանած մասնաճիւղի անդամական ժողովի առաւելագոյն քուէով: Բայց այս կարգի որոշման ենթակայ եղող անձը իրաւունք ունի

խնդիրը ենթարկելու կեդրոնական Գործադիր Մարմնի առ ի քննութիւն :

### ՅՕԴՈՒԱՄ Է .

#### Մասնաճիւղերու կազմութիւն

1.- Կեդրոնական Գործադիր Մարմնի միջոցաւ կամ իր թոյլտուութեամբ կը կազմուին մասնաճիւղեր, ուր հինգ կամ աւելի Քղեցիներ կան եւ կ'ուզեն անվերապա հօրէն սատարել միութեանս նպատակին :

2.- Մասնաճիւղերը կ'ունենան իրենց վարչական մարմինները, նուազագոյն երեք, առաւելագոյն եօթը հոգիէ բաղկացեալ, որոնք կը վարեն մասնաճիւղի ընդհանուր գործերը և պատասխանատու են մասնաճիւղի անդամական ժողովին :

3.- Մասնաճիւղի վարչութիւնները կ'ընտրուին տարին մէկ անգամ, անդամական ժողովի մը մէջ, ներկաներու առաւելագոյն քուէներով : Վարչութեան սովորական պաշտօնեաներն են ատենապետ, քարտուղար եւ գանձապահ : Վարչական ընտրութիւնը և հրաժարումը քարտուղարը պարտի ենթարկել կեդրոնական Գործադիր Մարմնի վաւերացման :

4.- Վարչութիւնները իրաւասու են յանձնախումբեր կազմելու և անոնց բացառիկ գործեր յանձնել՝ պայմանաւ, որ անոնք պատասխանատու ըլլան վարչութեան :

5.- Իւրաքանչիւր մասնաճիւղի գանձապահը պարտաւոր է կանոնաւորապէս պահելու մասնաճիւղի դրամական գործառնութեանց կանոնաւոր հաշիւները եւ այդ հաշիւներու վարչութեան կողմէ վաւերացուած պատճէնները :

6.- Երեք ամիսը անգամ մը կամ կեդրոնական Գործադիր Մարմնի մասնաւոր հրահանգովը, մասնաճիւղի գանձապահները պարտաւոր են իրենց մօտ եղած պատրաստի գումարները փոխադրել կեդրոնական Գործադիր Մարմնի Գանձապահութեան :

7.- Մասնաճիւղեր իրենց ընդհանուր հասոյթին միայն տաւրը տոկոսը կրնան յատկացնել տեղական ծախքերուն :

Որեւէ ժամանակ քսան եւ հինգ (§25) տօլարէն աւելի գումար պարտին ուղարկել կեդրոն :

8.- Մասնաճիւղերը պարտին երեք ամիսը անգամ մը իրենց գործունէութեան համար, տեղեկագիր և հաշուեցոյց ներկայացնել կեդրոնական Գործադիր Մարմինն :

9.- Մասնաճիւղերու անդամական ժողովները կանոնաւորապէս կը գումարուին կանխորոշ ժամանակներու մէջ կամ վարչութեանց անհրաժեշտ նկատած ատեն և կամ կեդրոնական Գործ. Մարմնի մասնաւոր հրահանգով՝ արտակարգօրէն :

10.- Մասնաճիւղերը իրաւունք չունին միութեան անունով հանգանակութիւններ ընելու առանց կեդրոնական Գործադիր Մարմնի հաւանութեանը :

11.- կեդրոնական Գործադիր Մարմինը կը լուծէ այն մասնաճիւղը, որու թիւը հինգէն պակաս է և լուծուած մասնաճիւղի անդամները կը փոխանցուին մօտակայ մասնաճիւղի մը :

12.- կեդրոնական Գործադիր Մարմինը կը կախակայէ որեւէ մասնաճիւղ որ չի անսար կեդրոնական Գործադիր Մարմնի հրահանգներուն և այդ կերպով ինքզինքը կը դնէ հակակազմակերպական դիրքի մը մէջ : Յանձնապարտ մասնաճիւղի մը վերջնական վճիռը վերապահուած է պատգամաւորական ժողովին :

## ՅՕԴՈՒԱԾ Ը .

### Կեդրոնական Գործադիր Մարմին

1.- կեդրոնական Գործադիր Մարմինը միութեանս բարձրագոյն՝ վերահսկիչ եւ ղեկավար մարմինն է, բաղկացած 9—11 անդամներէ, որոնք կ'ընտրուին միութեանս պատգամաւորական ժողովէն եւ կը վարեն միութեանս գործերը, պատգամաւորական ժողովի գծած սահմաններու մէջ, մէկ տարուայ ժամանակամիջոցաւ :

2.- կեդրոնական Գործադիր Մարմնի անդամներու մէկի բացակայութեան կամ պակասութեան պարագային, յաջորդ առաւելագոյն քուէն առնողը կը հրաւիրուի պաշտօնի՝ բացա-

կային տեղը, որուն պաշտօնէութեան շրջանը կը լրանայ յաջորդ պատգամաւորական ժողովին :

3.- Կեդրոնական Գործադիր Մարմինը իրաւունք ունի ի հարկին օգնական պաշտօնեաներ եւ գործիչներ վարձել, միութեան գործերուն աւելի մղում տալու համար :

4.- Գրամական գործառնութեանց պատասխանատու է Կեդրոնական Գործադիր Մարմինը ամբողջութեամբ : Սակայն գրամական խնդիրներու վերաբերեալ գրութիւններն ու ժառանգութեան պէտք է կրեն միայն նախագահի, Քարտուղարի եւ Գանձապահի ստորագրութիւնները, երբ այդ գրութիւնները վաւերացուած են Կեդրոնական Գործադիր Մարմնի լիազումար նիստէն :

5.- Կեդրոնական Գործադիր Մարմինը ունի պաշտօնէութեանց հետեւեալ բաժանմունքները : Նախագահութիւն եւ իրիս նախագահութիւն, Քարտուղարութիւն եւ իրիս Քարտուղարութիւն, Գանձապահութիւն եւ ասոր կից հաշուապահութիւն :

6.- Նախագահի պարտականութիւնն է՝ հսկել ժողովներու կանոնագրութեան, որոշումներու անթերի գործադրման, քարտուղարի հետ ստորագրելով բոլոր պաշտօնական թուղթեր կամ շրջաբերականները : Անոր բացակայութեան ժողով նախագահը պարտաւոր է ժողովները վարել, եւ նախագահի պարտականութիւնները կատարել :

7.- Քարտուղարի պարտականութիւնն է՝ ժողովներու հարազատ արձանագրութիւնները պահել, թղթակցութեանց եւ սրօպականդի գործերը օրը օրին կատարել եւ պաշտօնական գրութեանց ներքեւ ստորագրել նախագահի հետ : Անոր բացակայութեան՝ իրիս քարտուղարը պարտաւոր է ընել :

8.- Գանձապահին պարտականութիւնն է՝ ստացած դրամները գրամատուներ դնել օրը օրին, անոնց մաքուր հաշիւները պահել եւ ամէն մէկ ժողովին հաշուեցոյց մը ներկայացնել :

9.- Հաշուապահին պարտականութիւնն է՝ հաշիւներու

կանոնաւորութեան հսկել, ելեւմուտքի հաշիւէն օրինակ մըն ալ ինքը ունենալով ուրոյն տոմարի մը մէջ :

10.- Կեդրոնական Գործադիր Մարմինը իր բոլոր հաշիւներու և դործառնութեանց համար պատասխանատու է միութեանս ընդհանուր պատգամաւորական ժողովին :

11.- Կեդրոնական Գործադիր Մարմինը պարտաւոր է երեք ամիսը անգամ մը իր հաշիւներու հաշուեկշիռը ներկայացնելու մասնաճիւղերու և ի պահանջել հարկին՝ ընտրութեան մամուլի միջոցաւ :

### ՅՕԴՈՒԱԾ Թ .

#### Պատգամաւորական ժողով

1.- Պատգամաւորական ժողովը միութեանս դատական և օրէնսդիր մարմինն է : Պատգամաւորական ժողովէն յետոյ իր տուած լիազօրութեամբ միութեանս բարձրագոյն մարմինը կը հանդիսանայ Կեդրոնական Գործադիր Մարմինը, որ պատասխանատու է յաջորդ պատգամաւորական ժողովին :

2.- Պատգամաւորական ժողովը տեղի կ'ունենայ տարին մէկ անգամ, բոլոր մասնաճիւղերու ներկայացուցիչներու մասնակցութեամբ : Մինչև 20 անդամ ունեցող օրինաւոր և պարտաճանաչ մասնաճիւղ մը կրնայ տալ միայն մէկ պատգամաւոր, իսկ 20-է աւելի անդամ ունեցողներ, յաւելուածական մէկ պատգամաւոր՝ իւրաքանչիւր քսանի համար :

3.- Արտակարգ պատգամաւորական ժողով կը գումարուի Կեդրոնական Գործադիր Մարմինի անհրաժեշտ նշկատած պարագային կամ մասնաճիւղերու երկու երրորդի մեծամասնութեան պահանջով :

4.- Միութեանս պատգամաւորական ժողովին ներկայացող իւրաքանչիւր պատգամաւոր պարտական է գինքը ընտրող մասնաճիւղի վարչութեան կողմէ վաւերացեալ պաշտօնական վկայական ունենայ, ուր անպայման արձանագրուած պիտի ըլլայ իր գործօն մասնակցութիւնը միութեանս մէջ :

5.- Իւրաքանչիւր պատգամաւոր մէկ քուէի իրաւունք ունի, իր բացակայութեան պարագային փոխանորդ մը կը

նշանակէ՝ գործելու և քուէարկելու իր տեղը :

6.- Կեդր. Գործ. Մարմնոյ անդամները կրնան պատգամաւոր ընտրուիլ :

7.- Կեդր. Գործ. Մարմինը իրաւասու է պատգամաւորական ժողովին տալ երկու ներկայացուցիչներ որոնք բացի հաշուեքննիչ յանձնախումբի անդամութենէ համալօր են միւս պատգամաւորներուն :

**ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ**

Ա.- Միութեանս նպատակի յառաջացման և գործադրման համար անօրինութիւններ ընել :

Բ.- Գծել օրէնքներ եւ կանոններ առանց հակասելու միութեանս նպատակին :

Գ.- Քննել Կեդրոնական Գործադիր Մարմնի ընդհանուր տարեշրջանի գործունէութիւնը տալ իր անաչառ գնահատականը այդ գործունէութեան :

Դ.- Ընտրել Կեդրոնական Գործադիր մարմին մը յաջորդ տարեշրջանի համար :

**ՅՕԴՈՒԱԾ Ժ.**

**Արտակարգ Յանձնախումբեր**

Կեդր. Գործ Մարմինը իրաւասու է որեւէ տե՛ն արտակարգ յանձնախումբեր կազմել միութեան գործին մղում տալու համար, երբ ան անհրաժեշտ կը նկատէ: Օրինակի համար ֆինանսական յանձնախումբ՝ որու պաշտօնն է միջոցներ խորհիլ և գործադրել հասոյթներ ապահովելու համար, Կեդր. Գործ. Մարմնի հետ խորհրդակցելով: Պրօպականտի աշխատանքի յանձնախումբ, որու պարտականութիւնն է միութեանս պրօպականտի բոլոր գործերը հրատարակել և պրօպականտի այլ աշխատանքներ կատարել:

**ՅՕԴՈՒԱԾ ԺԱ.**

**Միութեանս Հասարկ Միջոցներ**

Միութեանս նպատակը իրագործելու համար, մեծ Հասոյթ մը ապահովելու միջոցներ կը նկատուին՝

Ա.- Մասնաճիւղերու մուտքերը և անդամատուրքերը :

Բ.- Ընդհանուր հանգանակութիւն և լայն շրջանակներու մէջ:

Գ.- Հանդէսներ, երեկոյթներ և այլ ձեռնարկներ:

Դ.- Փոխան ծաղկեպսակի և բացառիկ նուէրներ:

Ե.- Գիւղական միութիւններէ նուէրներ:

Զ.- Կտակներ:

Է.- Ապահովագրութեան գումարներ:

### ՅՕԴՈՒԱԾ ԺԲ.

#### Դրամական Գործածութիւն

1.- Գիւղական միութիւններէն, ընդհանուր հանգանակութիւններէն, բացառիկ նուէրներէն և կտակներէն գոյացած գումարները ամբողջութեամբ մը փոխադրուին Խ. Հայաստանի Պետական պանքան և կը գործածուին Խ. Հայաստանի մէջ նոր Քղի Աւանը շինելու համար միայն: Իսկ տեղական ծախքերը պիտի հոգացուին միութեան ջանքերով գոյացած այլ գումարներէ:

2.- Կեդրոնական Գործադիր Մարմինը բացի բացառիկ ծախքերու համար գործածելիք գումարներէն, իրաւունք ունի միայն երկու հարիւր (\$200) տօլար պահելու իր մօտ, յաւելեալ գումարները, որոնց քանակը կը հասնի հինգ հարիւր (\$500) տօլարի պարտաւոր է անհրձապէս փոխադրել Խ. Հայաստանի Պետական պանքան:

### ՅՕԴՈՒԱԾ ԺԳ.

#### Լուծում


Որքան ատեն, որ երեք մասնաճիւղեր գոյութիւն ունենան միութիւնը իր գործը կը շարունակէ, հակառակ պարագային միութիւնը կը լուծուի եւ իր մօտ գտնուած բոլոր գոյքերն ու դրամները կը յանձնուին Խ. Հայաստանի կառավարութեան գործածելու միութեան նպատակին համար:

### ՅՕԴՈՒԱԾ ԺԴ.

#### Կանոնագրի Փոփոխութիւն

Միութեանս կանոնագրի որեւէ յօդուած կրնայ փոխուիլ բացի անունէն եւ նպատակէն, պատգամաւորական ժողովի մը մէջ երկու երրորդի քուէով: Որեւէ բարեփոխումի պարագային ծանուցումներ զրկուելու են մասնաճիւղերուն պատգամաւորական ժողովէն: Անունազն երկու ամիս առաջ:

UUUU



Խ • ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԻՐԵՆՑ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ ԲԵՐՈՂ

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՎԵՐԱՇԻՆԱՑ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՆ՝

Արարկիրի Միութիւն

Համա-Խարրերդցիական Միութիւն

Սերաստիոյ Վերաշինաց Միութիւն

Մալաթիոյ Վերաշինաց Միութիւն

Թոմարզայի Վերաշինաց Միութիւն

Համա-Քղեցիական Միութիւն

Կեսարիոյ Վերաշինաց Միութիւն

Ֆէնէսէի-Ռուբինեան Ուսումնասիրաց Ընկերութիւն

Համա-Ներդնկացիական Միութիւն

Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան կողմէ

չինուած են հետեւեալ աւաններն ու թաղամասերը :

ՆՈՒՊԱՐԱՇԷՆ, «Նոր Հաճըն», «Նոր Եւդոկիայ»,

«Նոր Բալու», «Չընդուչ» եւ այլ.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220032191

(504)

I-  
32191



ԳԻՆ 15 ՍԷՆՔ



Եփնարար Քարտան  
Shinarar Press, 317-319 W. Larned St., Cherry 0273  
Detroit, Mich.  
U. S. A.